



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

Ազգային Պատրիարքարանի

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՅՈՒՄ 1884 ԱՄԻՆ

ՆԻՍՏ ԺԶ.

1 ՓԵՏՐՎԱՐ 1885



Կ. ՊՕԼԻՍ

1885

ԳԻՒՄՆՔ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ՄԱՅՐ ԳԻՒՄՆ

Տիգրան	Էֆէնտի	ԵՈՒՍՈՒՓԻԱՆ	Ա. Արեւոյե
Քրիստոստուր	»	Ղազարոսեան	Բ. »
Յովհաննէս	»	Թորոսեան	Գ. »
Յակոբ	»	Պօշակեան	Ա. Արեւոյե
Ստեփան	»	Տամատեան	Բ. »
			Գ. »

Ձեռնաստրեան Գիւան

Մատթէոս Եսկ. Իղժիրլեան Արեւոյե
 Դարեգին Վրդ. Թաթարեան
 Մարկոս Էֆէնտի Աղաբէգեանյ

Դաստիարակութեան Գիւան

Ռէթէոս Էֆ. Պէրպէրեան Արեւոյե
 Գէորդ » Աստուլլահ
 Միքայէլ » Մամիկոնեան

Կարուստոց Գիւան

Քրիստոս. Էֆ. Ղազարոսեան Արեւոյե
 Յակոբ » Եմէնիճեան
 Պօղոս » Թորգոմեան

Համարակալութեան Գիւան

Կարապետ Էֆ. Արզաճեան Արեւոյե
 Մկրտիչ » Ճանըմեան
 Գառնիկ » Յովակիմեան

Յարաբերութեան Գիւան

Յովհաննէս Էֆ. Թորոսեան Արեւոյե
 Ռուբէն » Պուլկուրեան
 Վիշէն » Օրմանեան

Իրաւաստութեան Գիւան

Գարրիէլ Էֆ. Նորատունկեան Արեւոյե
 Յովհաննէս ՔՏԵՍ. Մկրեան
 Յակոբ Էֆէնտի Արչապ

Նախաճեռնութեան Գիւան

Մինաս Էֆէնտի Չեւաղ Արեւոյե
 Յովհաննէս » Արշակունի
 Նշան » Պօյաճեան

Խմբագրութեան Գիւան

Կարապետ Էֆ. Իւթիւճեան Արեւոյե
 Հաբարձում » Ալաճաճեան
 Յակոբ » Գուրգէն

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ԲԱՑՈՒՄՆ 1884 ԱՄԻ

ՆԻՍՏ ԺՁ.

1 ՓԵՏՐՎԱՐ 1885

ՆԱԽԱԳԱՀ. — Պատրիարքական Տեղապահ.
ԱՏԵՆԱՊԵՏ. — Տիգրան էֆէնտի Եռուսեփեան.

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

Ա. — Ատենական գործողութիւնք.

Բ. — Խնդիր Ս. Երուսաղիմայ պարտուց. (Տերեկագիր վարչութեան — Դեմքալ)

Ընդ Նախագահութեամբ Պատրիարքական Տեղապահ Տ. Գէորգ Ծ. Վարդապետի Բուսճուզեան, Ատենապետ Եռուսեփեան Տիգրան էֆէնտի տտեանն րացաւ ժամ 7 1/2 ին, 'ի ներկայութեան 32 Երեւոյթանաց, որոց վերջին թիւը 41 ի յանգեցու :

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

Ա.

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԻ

1.

Մանագոյթ Պանճեգարուեան Մինրան Էճ. Ի.


ԱՏԵՆԱՊԵՏ Էճ. — Ատենական գործողութեանց չճանարկած, տաւր պարտականութեան

թիւն մը ունիմ կատարելու, Տեարք, այն է մեր պաշտօնակիցներէն Պանճեգարուեան Մինրան էֆէնտիի մտահարոյթն :

Հանգուցեալն մեր այն սրտշտնահացայ մին էր, որ երկուր տտենէ 'ի վեր սրտշտնավարութեան մէջ էր, և իւր պարտականութիւնն խղճի մտօր կը կատարէր :

Անրուժելի և երկարատես հիւանդութեան մը ենթակայ եղած, վերջին եօթնեկին մէջ իւր հոգին աւանդեց, և մեր պաշտօնակիցներէն անոնք որ կրցան ներկայ դունուիլ իւր յուրստանութեան հանգխախն, ժողովոյս ներկայացուցիչներն կը համարուէին, հրաժեշտի ողջոյնն տարու համար հմա՝ որ անդարձ և յաւիտենապէս կը բաժնուէր մեզնէ :

Այժմ մեզ ուրիշ բան չ'մնար ընել եթէ ոչ յոտնկայս յայտնել մեր խորին ցաւակցութիւնն օրհնելով նորա յիշատակն :



Ըստ հրահրանաց Ատենապետ էֆէնտիի , Երեսփոխանք յոտնկայս կը յայտնեն իւրեանց ցաւակցութիւնն , և Գեր . Տ . Սիմէօն Եպիսկոպոս Սէֆէրեան հողեհանգստեան աղօթքը կը կարգայ :

2.

Վաւերացումն ժ. ԺԳ. Եւ ԺԴ. ցիստերու Ատենագրութեանց :

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՖ.— Թէ և այսօր յատկապէս Երուսաղիմայ խնդրոյն համար հրահրեալ է Ժողովք 'ի դռնիակ նիստ գումարել , սակայն սոյն նիստն մեր սովորական նիստերէն մին լինելով , եթէ պատշաճ կը դատուի , կ'առաջարկեմք նախ քան զամենայն զբաղիլ մի քանի ատենական կարեւոր թղթոց քննութեամբն , և ապա անցնիլ Օրակարգին :

ԱՍՅՆԵՐ.— Շատ լաւ :

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՖ.— Ուրեմն նախ ձեռք կառնուք նախորդ նիստերու ատենագրութեանց վաւերացումը : — Ժողովոյս ժ.Բ. Ժ.Գ. և Ժ.Դ. նիստերու տպագիր Ատենագրութիւնք արդէն իսկ ձրուեալ լինելով , ըստ օրինի կը փութամ նախ և առաջ Ժ.Բ. նստինն ենթարկել Ձեր ընդունելութեան :

ՅՕՊԱՆԵԱՆ Մ. ԷՖ.— Նիստ ժ.Բ. Երես 346, Սիւնակ Բ. 6ըբ տողը— Սուրէնեան էֆէնտիի ժ.Դ. նստի Ատենագրութեան վրայ ' իր զիտողութեանց շարքին մէջ դիտել կաւտայ նաև թէ ես « Ենք բառն յետս կոչած եմ և շէ արձանագրուած : » Բայց հարկ է գիտնալ թէ ես այդ բառն յետս կոչած չեմ :

ԳՈՒՐԳԻՆ Յ. ԷՖ.— Երես 329. սիւնակ Ա. տող 31. պիտի լինի « և ոչ այն բացառիկ համակրութեան զոր ունիմք ևսպն » :

Նոյնպէս Երես 332. Սիւնակ Բ. Ա. տողին մէջ « Ենք-բն » բառն պիտի ըլլայ ' « Ենք-բն » :

ՄԵՐԵՆԵՄ-ԳՈՒՆԻ Յ. ԷՖ.— Նիստ ժ.Բ. Երես 324. Սիւնակ Բ. վերջին տողին մէջ ' « Ենք-բն » բառը պիտի լինի ' « Ենք-բն » :

Ժ.Բ. Նստի Ատենագրութեան վրայ ուրիշ դիտողութիւն չ'լինելով , Ատենապետ էֆէնտի ժողովոյն ընդունելութեան կ'ենթարկէ զայն , որ կը Վ.Ա.Ի.Է. հանդերձ դիտողութեամբը :

Ապա Ատենապետ էֆէնտի Ժողովոյ ընդունելութեան կ'ենթարկէ ժ.Գ. և Ժ.Դ. նիստերու Ատենագրութիւններն որք կը Վ.Ա.Ի. ԲԱՆԱՆ առանց որ և է դիտողութեան :

3.

Պաշտօնական հետագիր Գործնոցի Ս. Պատրիարքի Եւ խնդիր հրատարակաց :

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՖ.— Ատենական գործողութեանց կարգին մէջ կը փութամ 'ի սլաշտոնէ հաղորդել Ժողովոյց նորընտիր Պատրիարք Ամեն . Տ . Յարութիւն Արքայանի կողմանէ սու Մայր-Ղիւանն ուղղեալ մի հեռագիրն 'ի սլատասխանի մեր շնորհաւորական հեռագրոյն :

Ատենապետ էֆէնտիի հրահրմամբ Ատենագրութիւն էֆէնտիի կ'ընթեռնու Մայր-Ղիւանի և նորընտիր Պատրիարքի միջեւ փոխանակեալ հետեւեալ երկու սլաշտօնական հեռագրերն :

Ամեն . Ս . Հայր .

Ազգային Ժողովն Ձեր Սրբազնութիւնը Պատրիարք ընտրեց բացարձակ առաւելութեամբ քուէից :

Կը շնորհաւորեմք յ'անուն Երեսփոխանաց : »

Ազգային-Ժողովոյ

Ատենագրութիւն Ատենապետ Յ. Պօշնակեան Տ. Երեսփեան

25 Յունուար 1885
Կ. Պօլիս

Վսեմ. Տիգրան էֆ. Եռուսեթեան
Ատենապետ Ազգ. Ժողովոյ .

Ընդունեցանք Դիւանի հեռագիրը ,
չնորհակալ եմք Ազգային Ժողովոյ վստա-
հութեան որով կոչէ զմեզ Պատրիար-
քութեան Պօսոյ : — Յետ խորին մտած-
ման , պարտաւորութիւն զգացինք հը-
պատակիլ Աստուածային կամաց և Ազ-
գային Ժողովոյ անօրինութեան :

Յարուիսն Արքեպիսկոպոս

26 Յունուար 1885

Երուսաղէմ

Երեմիոսանք յամենուստ կը փութան չը-
նորհակալութիւն յայտնել նորընտիր Պատ-
րիարքի այն ընդունելութեան հեռագրի մասին :

Ա. ԱՃԱՃԱՅԱՆ Է. ԷՖ. — Ես կը կործեմ
թէ նորընտիր Ս. Պատրիարքի այն ընդունե-
լութեան հեռագրին 'ի պատասխան պատշաճ
կը ինն յանուն ժողովոյ մի չնորհակալեաց հե-
ռագիր ևս ուղղել տա Ամեն . Տ. Յարութիւն
Սրբոզոն :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ազգային Ժողովն դո-
ւութեամբ կը լսէ նորընտիր Ս. Պատրիարքի
ընդունելութեան հեռագիրն , այլ ըստ որում
իւր ընտրութեան տեղեկագիրն Կոյսերական
Կառավարութեան մատուցուած է , ուրեմն հարկ է
սպասել Հաստատման հրամանագրի ժամանման :
Արդարև տարակից չիցայ որ Կոյսերական Կա-
ռավարութիւնն սխալ փութոյ տա այս անօ-
րինել զարժանն , բայց մինչև որ խնդիրն իւր
այս օրինական շրջանէն չ'անցնի , չեմք կա-
րող բան մ'ընել :

ՓԱՓԱՋԱՅԱՆ Ս. ԷՖ. — Նոր հեռագրի մը
ոչեքն չեմ տեսներ և ես , վասն զի հրաւիրա-
կաց ընտրութիւնն արդէն ինքնին պատասխան
մը սխալ ըլլայ այն հեռագրին :

Այս ատիւ հարկ կը համարիմ զիսեւ
տալ թէ՛ Սահմանադրութիւնն՝ հրաւիրակաց
ընտրութեան իրաւունքն Ազգային Ժողովոյս
վերապահած է :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Քանի որ կարգն եկաւ,
ներեցէք Տեարք , որ խօսիմ Ձեզ հրաւիրակա-
լութեան խնդրոյն վրայ : Թէպէտ և հրաւիրուած
էի Վարչութեան Խառն Ժողովոյ վերջին դո-
ւարման ներկայ գտնուիլ , համաձայնութեամբ
հրաւիրակաց ընտրութեան ձեռնարկելու հո-
մար , սակայն նկատելով որ Սահմանադրու-
թիւնն այդ իրաւունքն Ազգային Ժողովոյ կը
վերապահէ և Ձեր Ատենապետն այս մասին որ
և է հրահանդ չէր ընդունած Ժողովէդ , պատ-
շաճ դատեցի Ժողովոյդ բերել խնդիրն :

Արդ , կուղէ՞ք որ նորընտիր Ս. Պատ-
րիարքն 'ի Կ. Պօլիս հրաւիրելու համար կար-
գելի հրաւիրակաց ընտրութիւնը Ժողովոյդ ձե-
ռամբ կատարուի , թէ չէ՞ Վարչութեան կը
թողուք այդ հոգն :

ՊԵԿԵԱՆ Յ. ԷՖ. — Կառավարիւմ արտօ-
նել Մայր-Դիւանն որ Խառն Ժողովոյ հետ
միանալով , հարկ եղած անօրինութիւնները
ընէ հրաւիրակաց ընտրութեանն համար :

ՁԱՅՆԵՐ. — Շատ օրինուոր է այդ առա-
ջարկն :

Պէկեան Յ. Էֆէնտիի այն առաջարկն
կրկնուելով ի բազմաց , Ատենապետ Էֆէնտի
բուէի կը զնէ զայն որ ԿԸՆԴՈՒՆՈՒՄԻԻ միա-
ձայնութեամբ :

Հետեւաբար ԿՈՐՈՇՈՒՄԻ նորընտիր Ս.
Պատրիարքն 'ի Կ. Պօլիս բերելու համար կար-
գելի պատուիրակաց ընտրութեան խնդիրն
յամանել Մայր-Դիւանին և Վարչութեան Խա-
ռն Ժողովոյ :

4.

Յաւակցական գիր 'ի դիմաց Նիւ-Եորքի ազգայնոց :

ԱՅՆԱՆՊԵՏ ԷՖ.— Ժողովոյս դադարման միջոցին Նիւ-Եորքի և շրջակայ քաղաքաց չափոյ կողմանէ ցաւահայութեան գիր մը ստուցանք հոգեւոյս Ներսէս Պատրիարքի մահուանն առթիւ Ազգային Ժողովոյս ուղղեալ :

Քէպէտ և այն օրինակ գրեր և հետագիրք հրատարակուեցան ժամանակին լրագրաց միջոցաւ, սակայն մեր Ամերիկացի եղբարց զիրն ուղղակի Ազգային Ժողովոյս ուղղեալ լինելուն համար, պարտաւորութիւն կըզգամ իր կարգին հաղորդել ըսն Ժողովոյք :

Չայս ատելով Ատենայեալ Էֆէնտի կը հրահրէ գլխաւորապէս Էֆէնտի ընթեռնուլ ըսն :

Ղխեմաշուք Տէր .

Նիւ Եորք և շրջակայ քաղաքները բնակեալ Հայք իրենց վերջին գումարման մէջ անբացատրելի ցաւով լսեցին զգոյժ վախճանի Ամեն . Տ . Տ . Ներսիսի ազգասէր և համայն ազգին սիրելի Պատրիարքին :

Նոր աշխարհէլ այս կողման Հայք իրենց նախորդ գումարման մէջ բարեգէպ առթիւ մը յիշելով ազգասէր Պատրիարքին չքնաղ բարեմասնութիւններն, քրիստոնէական և հայրենասիրական վեհ ոգին և այն պատուական ծառայութիւններն զորս մատուցած էր ազգին Նորին Սրբազնութիւնն իւր Պատրիարքութեան տասնամեայ միջոցին, սրտագին երախտագիտութիւն կը յայտնէին և ջերմ բարեմաղթութիւններ կ'ուղղէին առ

Աստուած վանն երկարութեան կենաց Նորին Ամեն . Սրբազնութեան , քիչ օրեր ետքն Ամերիկայի լրագրաց մէջ հրատարակուած հեռագիրք կը գուժէին Հայոց Պատրիարքի մը վախճանին, բայց այս հեռագիրք էին չմտած (զի ոչ թէ Ներսէս Սրբազանի, այլ Աղարեան Գերապայժառի անունը կուտային), և Ներսէս Սրբազանի պատուական կենաց համար նոր աշխարհէլ Հայոց բարեմաղթութիւններն և փափաքներն էին այնպէս բուռն , որ Նիւ Եորքի և շրջակայից Հայք սիրեցին հաւատալ թէ հեռագրաց տուած գոյժը չէր Ներսէս Սրբազանի վախճանման գոյժն , ուստի և աւելի կը ցաւին և կը մորմոքին որ չկրցան այս պատճառաւ ժամանակին իրենց կողմանէ ծաղիկ փռուլ մը դնել տալ Նորին Սրբազնութեան դագաղին վրայ , և հիմա իրենց արտասուքը կը խառնեն համայն Հայոց արտասուաց ի վերայ չկրմին անզուգական Հոյրապետին որ իւր կեանքը նուիրեց յօրուտ և ի վերակենդանութիւն ազգին :

Ներսէս Սրբազանի սրտի և մտաց բարձր յատկութիւններն , քրիստոնէական և հայրենասիրական ոգին , անչափահասնգրութիւնն և անագիւտ վարքն , որ քաջածանօթ են , ի սիրուռն աշխարհէլ ցրուեալ բոլոր Հայոց սիրտերը լեցուցած էին անհուն սիրով առ Նորին Սրբազնութիւնն , և աշխարհէլ ամէն կողմէն բոլոր Հայք իրենց տկնարկները կուղղէին ազգասէր Պատրիարքին վրայ , իբրև արժանաւոր յաջորդի և հետևողի այն մեծանուն Հայրապետաց որ չորրորդ դարէն մինչև իննստասներորդ դար մերթ փայլած են Հայաստանիսց Եկեղեցւոյ

մէջ իբրև յուսոյ աստղեր, և դտնուած են ազգին գլուխն իբրև անձնուէր հօտապետներ որ դրած են իրենց անձերն ի վերայ հօտին :

Նիւ Եորքի և չրջակայից Հայք քաջ կռուելով այն ծառայութիւնները զորս ներսէս Սրբազան, բիւրիցս ողբացեալ Պատրիարքը, մատոյց ազգին, կը ճանչնան Նորին Սրբազնութիւնն իբրև արդար և ազգասէր և ընտիր Հովիւ, մին ի մեծ բարեբարաց ազգին, չքնաղ ձերբերով օժտեալ Պատրիարք մը, որ նորքայլ տուաւ Պատրիարքական Աթոռոյ, և աւելցուց Հայ անուան պատիւն առաջի աշխարհի, Նոր աշխարհի Հայք դառնապէս կողբան մեծ և անդարմանելի կորուստն զոր ըրաւ Հայոց ազգն յանձին Ամեն Տեառն Ներսիսի, և թարգման կը կանգնին ստորադրեալներն յայտնելու Ազգային պատկառելի ժողովոյ իրենց խորին ցաւակցութիւնն, և յայտարարելու թէ ներսէս Սրբազանի յիշատակն, ինչպէս ուրիշ տեղեաց, նոյնպէս և նոր աշխարհի Հայոց սիրտերուն մէջ անջինջ պիտի մնայ, և պիտի ըլլայ կապ սիրոյ և միութեան ամէն դաւանութենէ Հայոց մէջտեղ գործելու յօդուտ և ի վերակենդանութիւն ազգին :

Մարտի 19-ի որ երկինք պարզեան Պատրիարքական աթոռոյ արժանաւոր յաջորդ ուղտով ներսիսի, կը խնդրենք որ հաճիք ընդունիլ մեր խորին ցաւակցութեան հաւատարիք :

Ի դիմաց Նիւ Եորքի և չրջակայից Հայոց

Խ. Օսկանեան

Նախագահ Մասնաժողովոյ

Տօր. Մ. Տաւրեան

Ա. Ալվազեան

Յ. Սարգսեան

Յ. Մուրաճեան

Նիւ Եորք Նոյ. 16/28, 1884

Նիւ-Եորքի ազգայնոց կողմնէ ցոյց տուած սոյն ցաւակցական սրտայայտութեանց մասին՝ ժողովն յայտնելով իւր դժգոհութիւնըն, կանցնի ատենական միտ գործողութեանց :

Յ.

Երեսփոխանական հրատարակիչ Յ. ԷՖենտի Արշակունցոյ :

Ատենապետ Էֆէնտի նոյնպէս ժողովին կը հաղորդէ Երեսփոխան Արշակունի Յովհաննէս Էֆէնտիի հետեւեալ հրատարակիչն :

Վսեմ, Ատենապետ.

Ազգ. ժողովոյ ժԳՐ նստի ատենադրութենէն կը աւելեկանամ որ ժողովը ընդունելով հրատարականս Մայր-Դիւանի և Նախաձեռնութեան Դիւանի անդամակցութենէ, յետաճեղ է ընդունելութիւնն հրատարմանս յ'երեսփոխանական պաշտօնէս, զոր նոյնպէս խնդրած էի Հովտ. 25 թուակիր զրովս :

Շնորհակալութեամբ կուգամ խնդրել, որ փութացուի սոյն ընդունելութիւնն ևս :

Մնամ յարգանք

Արշակունի Յովհաննէս

18/30 Յունիս 85 Յիւլիպէ

ՔԱՐԷՈՍԵԱՆ Ռ. ԷՖ. — Կառավարիւմ ընդունելի այդ պարզ հրատարակիչն :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Բ. ԷՖ. — Շնորհակալ եմք Արշակունի Էֆէնտիին որ մնայուն գործով Պուսէն Հեռու գտնուելուն պատճառաւ կը փութայ թողուլ իւր աթոռն, որպէս զի յաջորդ մ'ընտրուի իւր տեղը : Մինչդեռ կան շատ մը Երեսփոխաններ որք թէ և սոսմանայ կերպիւ հրատարակեցոն մենէ, սակայն ոյժ մ'մնայուն

պաշտօններով հաստատուած են, բայց և այնպէս դարձեալ հրաժարական չեն զրկեր: Ուստի կառավարիկեմ որ, եթէ կարելի է, վերջնական անօրինութիւն մը լինի այսպիսեաց համար:

ԳՈՒՐԳԷՆ Յ. ԷՖ. — Ասից յառաջ երբ Արշակունի էֆէնտի իւր երեսփոխանական պաշտօնէն հրաժարագիր զրկեց Ժողովոյս, ևս էի առաջինն որ մերժել առաջարկեցի զայն, զի չէի գիտեր թէ իւր ճամբորդութիւնն առ ժամեաց է թէ ոչ:

Իսկ այժմ, ևս ևս զոչնակութիւնս կուգտամ յայտնել առ Արշակունի էֆէնտի, որ նկատելով թէ չ'պիտի կրնայ առ մեզ վերադառնալ, անկեղծաբար կուգայ հրաժարիլ, որպէս զի գէթ երեսփոխանական օթոռ մը չը մնայ թախտը, մինչդեռ կան երեսփոխաններ, որպէս յայտնեց Քրիստոսաւոր էֆէնտի, որը մնացուն պաշտօններով հաստատուած են այլուր բայց և այնպէս չեն հրաժարիր, ինչպէս է Աղաթկեանց էֆէնտի:

Ես այնպէս կը կարծեմ թէ Աղաթկեանց էֆէնտի, Պատրիարքական խնդրոյն առթիւ, փոխառեալ մեզ անօրտակ ըսներ զրերու, լուրջնէր եթէ իւր հրաժարականն զրկէր:

Ուստի ձայնակցելով Ղաղարսեան էֆէնտիի, կուտաջարիկեմ որ մնացուն պաշտօններով Պօլսէն բացակայ երեսփոխանաց մասին ժողովն վերջնական անօրինութիւն մ'ընէ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կը փութամ նախ ժողովոյդ քուէին ենթարկել Արշակունի էֆէնտիի հրաժարագիրն, և ապա անցնիլ բացակայութեանց մասին ներկայացեալ առաջարկութեանց:

Ձայս ասելով Ատենապետ էֆէնտի քուէի կը զնէ Արշակունի Յ. Էֆ. ի երեսփոխանական հրաժարագիրն որ կ'ըն՛ՎՈՒՆՈՒԻ Ժողովն:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Պահ մ'տուաջ Ղաղարսեան և Գուրգէն էֆէնտիք կուտաջարկէին

մնացուն պաշտօնով Պօլսէն մեկնող երեսփոխանաց մասին մի վերջնական անօրինութիւն ընել:

Որչափ որ կը յիշեմ, նախորդ նախ մը մէջ յուշուցաւ արդէն այս խնդիրը և Մայր Դիւանն յանձնուցեալ քննել երեսփոխանաց բացակայութեան պատճառներն, ինչպէս և անոնց մնացուն կամ առժամեաց պաշտօն մ'ուսնենալ:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Այո՛, այդ է Աղաթկեան Ժողովոյ որոշումն, ուստի կ'առաջարկեմ որ, ըստ նախորդ որոշման ժողովոյ, Մայր Դիւանն բացակայ երեսփոխանաց ցուցակն և անոնց պատճառաբանութիւններն քննելով ևս պատրաստելով ժողովոյս բերէ, որպէս զի ըստ այնմ հարկ անսնուածներն հրաժարեալ նկատուին ըստ ներքին կանոնագրի, և նոցա տեղ նոր ընտրութեանց հրահանգ յղուի:

ԶԱՏՆԵՐ. — Շատ լաւ, մենք ալ կը ձայնակցեմք այդ առաջարկութեան:

Հետեւաբար ժողովն երկրորդ անգամ կ'ըն՛ՏԱՆՁՆԱՐԱՐԷՐ իւր Մայր Դիւանին որ Պօլսէն բացակայ երեսփոխանաց ցուցակն պատրաստելով առ ինքն ներկայէ:

6.

Վիճակաւ դադարումն երեսփոխանաց:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ատենական գործողութիւնք ուստաւած են: Սակայն Օրտակագի անցնելէ յառաջ, Դիւանս կը փութայ օրինական խնդիր մը ներկայել Ձեզ 'ի կարգադրութիւն:

Յայտնի է թէ Եկեղեցական և կեդրոնական երեսփոխանք, որք հինգ շրջանակներու բաժանեալ են, երկու տարին մի անգամ մի՞ճակաւ կը դադրին:

Այժմ այդ օրինական դադարումը ներկայ 85 ի շրջանի համար Ա. վիճակին կիցնայ, հետեւորար հարկ է առ այս՝ նոր ընտրութեանց հրահանգն յղել Վարչութեան: Սակայն աւելորդ չեմ համարիր դիտել տալ թէ՛ դադարելի երեսփոխանք մինչեւ ց'ընտրութիւն կրենց յաջորդին, իրաւունք ունին պահել իրենց երեսփոխանական աթոռներն:

20 ՊԱՆԵՆԱՆ Մ. ԷՖ. — Յայտնի է թէ վիճակաւ դադարման դրութիւնն միմայն կեդրոնական երեսփոխանաց համար ի դրո՞ծ կը դրուի, իսկ Գաւառական երեսփոխանք այս մասին բացառութիւն մը կազմած են և անպայման ժամանակաւ կը վարեն զիւրեանց պաշտօն, հատուակ Սահմանադրութեան՝ որ տասնամեայ որոշ պայմանաժամ մը զծած է նոցա պաշտօնավարութեան:

Արդ, համաձայն արդարութեան և օրինակութեան շարժած լինելու համար, կառավարեմ՝ որ այդ Գաւառական երեսփոխանաց 40 աթոռներ ևս հինգ շրջանակաց վերածուին իւրաքանչիւր ութական զաւառի վրայ, որք նշման կեդրոնիս՝ երկու տարին մի անգամ դարին ի պաշտօնէ:

Հետեւորար քանի որ այս տարի երեսփոխանաց ընտրութեան մասնակի վերանորոգում պիտի լինի, զաւառներն ևս բաժնելով վիճակաւ Ա. Բ. ևն, այս տարի առաջին շրջանակին հետ գաւառական Ա. շրջանի երեսփոխանք ևս դադարին և նորք ընտրելու հրահանգ զրկուի:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ինչպիս լսեցիք, 20 պանեան էֆէնտի կառավարիչ գաւառներն ևս 8 շրջանակի վերածել, որք նման կեդրոնիս՝ երկու տարին մի անգամ վիճակաւ դադարին ի պաշտօնէ:

Արդեօք այս առաջարկութեան մասին դիտորութիւն ընող կա՞յ:

ԹԻԻԼՊԵՏՏՅԱՆ Ն. ԷՖ. — Ըստ իս, կարծեմ աւելի օրինական է որ այդ առաջարկն ի գիր առնուելով նախ յղուի իրեն պատկանեալ Նախաքննիչ Դիւանին, և յետ քննութեան՝ օրինական տեղեկագրով մը զայ ծողովոց, վասն զի այդ առաջարկն ուղղուի Սահմանադրութեան մէկ կէտին բարեփոխում է:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Կառավարիչու ներկայացեալ առաջարկն յղել ի նախաքննութիւն: Երբ ասկից յտուջ Գաւառական երեսփոխանաց խնդիրն յուղեցաւ աստ, ևս կառավարիչի Վարչութեան յղել զայն, այլ երեսփոխանք մեծամասնութեամբ որոշեցին Նախաձեռնութեան Դիւանին յանձնել, որ ց'արդ դժբաղդարայ չ'ըրբաւ իւր տեղեկագրւին: Եթէ այս անգամ ևս խնդիրն անդ յըրուի, կարծեմ նախ իւր նախորդին բաղդին վիճակակից պիտի ըլլայ:

ԶԵՐԱԶ Մ. ԷՖ. — (Ատենացետ Նախաձեռնութեան ղիւանի) Ղադարոսեան էֆէնտի իրաւունք չ'ունի ստորկել թէ Նախաձեռնութեան Դիւանն իւր տեղեկագիրը չէ բերած գաւառական երեսփոխանաց դադարման մասին: Նախաձեռնութեան Դիւանն, որ իրեն յղուած բոլոր խնդրու տեղեկագիրները փութացած է բերել, չէ ստացած ո և է պաշտօնագիր այդ խնդրոյ մասին: Գալով բուն խնդրոյն, քանի որ Ազգային Սահմանադրութիւնը գաւառական երեսփոխանաց համար տասնամեայ պաշտօնավարութիւն որոշած է, 8-10 տարի է ի վեր պաշտօն վարող երեսփոխանք պէտք է որ աւաջին վիճակը կալուն, և այլք ըստ կարգի:

ԻԶՄԻՐԵԱՆ Տ. ՄԱՏԹԷՍ ԵՊՍ. — Արդարեւ զարմանալի է որ գաւառական երեսփոխանաց վիճակաւ դադարման մասին 20 պանեան էֆէնտի կողմանէ ներկայացեալ առաջարկն Նախաքննութեան յղել կառավարիչու և քննութիւն կը պահանջուի, մինչդեռ

ընդհանրապես երբ կարգն գոյ Եկեղեցական
և Կեղերոնական երեսփոխանաց, այդ օրինակ
ձեւակերպութեանց հարկ չտեսնուիր :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷԾ.— Գաւառական ե-
րեսփոխանաց վիճակաւ դադարման առաջար-
կըն անցեալ տարի ես էի ժողովին բերողն ,
և ան առեւն Կոմարննութեան յրուեցու , ո-
րոյ տեղեկագիրը ցարդ չեկաւ : Բայց այժմ
կը տեսնեմ թէ այս մասին Զօրանեան Էֆէն-
տի կողմանէ ներկայացեալ առաջարկն որ է՝
գաւառներն Յ շրջանակաց վերածել նման
Պօլայ շրջանակաց, աւելի օրինակուն է : Ռու-
տի կառավարիւմ որ այդ առաջարկն ընդուն-
ուելով , այսօր խի գործադրութեան դրուի
հաս ժողովոցս մէջ :

ԻՋՄԻՐԼԵԱՆ Տ. ՄԱՏՔԷՍ ԵՊՍ.— Փա-
շաղեան Էֆէնտի կառավարիէ որ այդ գոր-
ծողութիւնն ժողովոցս միջոցաւ ի գործ դրուի
բայց երած է որ երեսփոխանաց վիճակաւ դա-
դարման գործողութիւնը վարչութեան ձե-
ռամբ կատարուած է , ինչպէս 1879 ին Եկե-
ղեցական երեսփոխանաց համար :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷԾ.— Եթէ երած ալ է,
սխալ է . կրօնականաց վիճակաւ դադարումն
ոմնուան վրայ էր , մինչ այժմ տեղոյ վրայ վի-
ճակ պիտի ձգուի , և ինչպէս Պօլայ թաղե-
րուն վիճակը ժողովոցս մէջ կատարուած է ,
նոյնպէս պէտք է լինի նաև դաւառաց վիճակը :

ՁԱՅՆԵՐ. — Դ՛ս է , ր՛ս է :

Յառնուած երեսփոխանք ըուէ պոհան-
ընով , Առնուպետ Էֆէնտի բուէի կը դնէ
Զօպանեան Միչրան Էֆէնտի կողմանէ ներ-
կայացեալ առաջարկն , որ ԿԸՆԴՈՒՆՈՒԻ
քը-
ւէից մեծամասնութեամբ : Եւ ըստ առաջար-
կութեան Փախաղեան Էֆէնտի , ԿՈՐՈՇՈՒԻ
Գաւառներն ես նման Կեղերոնի՝ հինգ շըր-
ջանակաց վերածել այսօր , յատենի ժողովոյ :

Հետեւորք Գաւառական շրջանակաց
բաժանման մասին վիճակ ձրուելով , հետեւ-
եալ արդիւնքն կունենայ .

Ա. վիճակ

- 1 Չրմկիւածադ 5 Եօղղատ
- 2 Գաղատիա 6 Մալաթիա
- 3 Ատանա 7 Իդմիր
- 4 Սղերա 8 Եգիպտոս

Բ. վիճակ

- 1 Պրուսա 5 Եգեսիա
- 2 Եւրօկիա 6 Մանսըլլա
- 3 Ամասիա 7 Հաճըն
- 4 Բալու 8 Երզնկա

Գ. վիճակ

- 1 Կարին 5 Ակն
- 2 Քէօթիսահեա 6 Ղարահիսար
- 3 Անդրիանուպօլիս 7 Արաբկիր
- 4 Նիկոսիոյիա 8 Բաղէշ

Դ. վիճակ

- 1 Թէքիրտաղ 5 Մուշ
- 2 Կեսարիա 6 Տիվրիկ
- 3 Խարբերդ 7 Ջէյթուն Մարաշ
- 4 Պալքըքէքեր 8 Տրապիզոն

Ե. վիճակ

- 1 Պաղտաս 5 Հալէպ Այնթապ
- 2 Տիգրանակերտ 6 Սեբաստիա
- 3 Վան 7 Ռուսճուդ
- 4 Աղթամար 8 Բաբերդ

Եւ ԿՈՐՈՇՈՒԻ 1885 ի նստաշրջանի հա-
մար վիճակաւ դադարել նկատել Եկեղեցական,
Կեղերոնական և Գաւառական Ա. վիճակներն ,
որոց երեսփոխանքն իրենց պաշտօնը պիտի
չարունակեն ց'ընտրութիւն և ց'վաւերացու
յալօրոցայ :

բ.

Խոնդիր Երուսաղիմայ պարտուց բարձման Էս Տեղեկագիր Ազգային Վարդութեան :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Ատենական գործողութիւնը աւարտած լինելով, այժմ կանցնիմք մեր Սրահարզի միակ խնդրոյն, որ է՝ « Խոնդիր պարտուց բարձման Ս. Երուսաղիմայ և Տեղեկագիր Ազգ. Վարչութեան » :

Անշուշտ կը յիշէք թէ՛ ժողովք իւր 13րդ Տատին մէջ նկատուողութեան աննշով խնդրոյն տարկողականութիւնն, որոշեց իւր յաջորդ գումարման մէջ ձեռք առնել այս մասին Վարչութեան կողմանէ առ Ինքն ներկայացեալ 1884 յունիս 30 թուակիր տեղեկագիրը (1), որ արդէն բաշխուած է Երեսպագեան Տեսարց, և յունիս վերջնական կարգադրութեան մը : Ասկոյն ցաւալի պարագայ մը, որպէս յայտնի է, պարտուցը զմեզ տոհմ մը դադրեցընել մեր նկատերն, յանձնարարուեցաւ Ձեր Ատենակցեաց Գիւանին որ նախապէս ինքըն ուսումնասիրելով խնդիրն, պարտատուած բերէ ժողովի :

Հետեւաբար Ձեր Ատենակցեաց Գիւանն ուսումնասիրելով խնդիրն և առ այս լսելով Վարչութեան բերանայի բացատրութիւնքն, այսօր կողքայ իւր հակիրճ տեղեկագիրն ներկայել ժողովոյ :

Ձայս յայտարարելէ յետոյ, Ատենակցեաց էֆէնտի կը հրուիրէ զԱտենադատը էֆէնտի ընթեանուլ Ատենակցեաց Գիւանի տեղեկագիրն :

Ատենակցեաց Գիւանն Ս. Երուսաղիմայ պարտուց բարձման խնդրոյ մասին Խառն ժողովոյ կողմանէ տրուած բացատրութիւնքն լսելէ զինի, նկատելով

(1) Տես ներկայ ատենադրութեան վերջը :

որ առ այս՝ Ազգ. Վարչութիւնն հարկ եղած բոլոր պատշաճագոյն միջոցներն նախատեսած և խորհած է, միաձայնութեամբ որոշեց սկզբամբ ընդունիլ Խառն ժողովոյ կողմանէ Ազգային ժողովոյ դատուցեալ 1884 Յունիս 30 թուակիր Տեղեկագրին եղբակացութիւնն, ալլատ ժողով զինքն պարտուց բարձման համար այնպիսի ժամանակա միջոց մը որոշել որ ըստ կարելոյն դիւրատար լինի :

- Անդամք Ատենակցեաց Գիւանի
- Մատրեսու Եպիսկոպոս Իզմիրլեան
- Գ. Ղազարուսեան Տ. Եուսուֆեան
- Յ. Թորոսեան Կ. Իսիքսեան
- Կ. Սըվաճեան Մ. Ձերազ

1 Փետրվար 1885 կալաթա

(Թե՛ ընթերցու՛)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— (Ղարուակիւիով) Ինչպէս կը տեսնէք, Ատենակցեաց Գիւանն ներկատրութեան աննշով խնդրոյն փափկութիւնն եւ ստիպողականութիւնը, կեղրակացընէ սկզբամբ ընդունիլ Վարչութեան առաջարկն, որ Ազգին համար ըստ ամենայնի պատուաբեր լինել ի զատ, դիւրադար եւ դիւրագանձելի է միանգամայն :

ՓՈՓՈԱՋԵԱՆ Ս. ԷՖ.— Որպէս կը յիշէ Պատ. ժողովք, Երուսաղիմայ պարտուց վերջարմանն համար, Վարչութիւնը ասկից յառաջ՝ առանց նախապէս ժողովոյս հաւանութեանն զիմելու, առաջարկ մը ներկայացուցած էր Կայսերական Կառավարութեան : Սակայն ժողով մի Յանձնաժողով կարգեց ջըննելու համար այդ առաջարկի սկզբունքը : Բաց Յանձնաժողովն նկատելով որ Կայսերական Կառավարութիւնն մէկ տարուան ժամանակամիջոցի մէջ չէ պատասխանած առ Ինքն

ներկայացեալ անաշարկին, հետեւաբար հարկ եւ տեղի չտեսաւ նորա քննութեամբն զբաղելու, ուստի տարբեր առաջարկ մը բերաւ ժողովիս, որ էր՝ ըստ վաղեմի սովորութեան՝ ի Գաւառս նուիրակաց ձեռամբ հանդանակութիւն մ'ընել զոր ժողովն ընդունեց, եւ այն ինչ կայտերական կառավարութեան հաւանութիւնն պիտի խնդրուէր եւ հաւ Բ. Գուռըն ծանոյց թէ՛ զինուորական տրոց յաւելման մասին յառաջագոյն առ Ինքն ներկայացնալ առաջարկն ընդունուած է: Այս բարձրագոյն որոման վրայ՝ ժողովն իւր կողմանէ նախապէս կարգեալ Յանձնաժողովին վերստին յանձնարարեց խնդիրն ի քննութիւն եւ ի տեղեկագրութիւն: Յանձնաժողովոյ անդամք էին Նուրեան, Պէրպէրեան, Արշակ Յակոբ, Մատթէոս Ալիքսանեան Եփէնտիք եւ ես. առաջին երկուքն չներկայացան, բայց մնացեալքս ըստ հրաւիրանաց Խառն ժողովոյ երկուստեզամ ներկայ գտնուեցանք ժողովին, այլ անկարելի եղաւ համաձայնութիւն մը դուստցնել, զի Վարչութիւնն կըսէր թէ՛ այդ պարտուց վճարման համար՝ բացի զինուորական տրոց յաւելումէն, որոյ գործադրութեան հրամանագիրն արդէն իսկ ընդունուած էր Բ. Գրնէն, ուրիշ միջոց չ'կայ, եւ թէ՛ Երուսաղիմայ պարտուց խնդրոյն ծանրութիւնն ընդ փոյթ կարգադրութիւն մը կը պահանջէ, եւ եթէ՛ Քննիչ Յանձնաժողովը պնդէ իւր կարծեաց վրայ, արգելք մը յարուցած պիտի լինի լինելիք հանդանակութեան եւ պիտի փնտռուի Երուսաղիմայ վանքը:

Յանձնաժողովս ալ նկատելով թէ՛ Վարչութիւնն խորին հանողութեան անհարկեալ եղանակին վրայ, եւ նկատելով այն առարկութիւն թէ՛ վրաս պիտի լինի Երուսաղիմայ վանքին՝ պարտաւորեցաւ յայտարարել թէ՛ ձեռնպահ պիտի մնայ:

Սոյն յայտարարութիւնն ասիցց առաջ եւս ըրած լինելով նաեւ յատենի Ազգային ժողովոյ, վերստին կուգամք կրկնել թէ՛ զինուորական տրոց վրայ յաւելման խնդրոյն մէջ՝

2եր Յանձնաժողովն ձեռնպահ մնացած է եւ պիտի մնայ:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՃ.— Անոնք որ կը կարդան ժողովոյս ատենագրութիւնները, գիտեն թէ ես Վարչութեան առաջարկին դէմ եմ, բայց որովհետեւ մեր ընդդիմութիւնը ողորտ չ'ունի, ուստի կը պարտաւորմ համակերպիլ իւր առաջարկութեան, որպէս զի գէթ խղճիս վրայ չ'ձանրանայ:

Երե՛ք Աթոռներ, երեքն ալ ցաւալի վիճակի մատնուած, արդարեւ Տ. Ներսէս Պատրիարքի մահուամբ Ազգն մեծ կորուստ մ'ունեցաւ, բայց փառք Տիրոջն որ Աթոռն անտէր չ'թողուց: — Այժմ կը մնայ Երուսաղիմայ պարտուց խնդիրն, որոյ բարձման մասին կայտարարական կառավարութիւնն ընդունած է Վարչութեան առաջարկութիւնն: Անոնքս ալ արդէն համոզուած եմք թէ՛ Տէրութիւնն մեր պաշտպանն է, եւ ինչ որ ընէ, անշուշտ մեր օգտին համար կընէ: Ուստի պիտի խնդրեմ յատկապէս իմ ազնիւ պաշտօնակիցներէս որ գէթ այս խնդրոյս մէջ թէ՛ մը թիչ խօսիմք, որպէս զի կարենամք թիչ մ'ալ գործել:

ՅՆԿԵՐԱՆ Ա. ԷՃ.— Ամեն անոնք որքայց ելած են Երուսաղիմ, կրցած են անշուշտ ըմբռնել թէ՛ ինչ մեծ նշանակութիւն ունի Նա աշխարհի առջեւ կրօնական տեսակէտով եւ դոյապեալ պարտքն ալ այնպէս կըրնան ըմբռնել թէ՛ ինչ պարտք մ'է. իսկ անոնք որ չեն դացած, անոնք ալ այնպէս կըմբռնեն իսկ նոքս որ դացած են ի Հայաստան, եւ տեսած են Հայաստանցւոյն դտան վիճակը, անոնք ալ կրնան ըմբռնել թէ՛ զինուորական տուրքի վրայ այս պարտք յաւելուլ ինչ նշանակութիւն ունի:

Շուրջ 10—13 տարի է որ Ս. Երուսաղիմայ պարտքը գլուխն առեր կերթայ, եւ եթէ ժամ առաջ դարման մը չ'իտորիմք այդ պարտուց վճարմանն համար, հետեւանքն աղլ-

տաբեր պիտի լինի : Արեւմն եւ եւս՝ սկզբամբ պիտի համաձայնիմ այս մասին Վարչութեան բերած առաջարկին, բայց պայմաններով միայն : Վարչութիւնն իւր տեղեկագրին մէջ կ'ըսէ, միթէ միայն գաւառներն պիտի մասնակցին սոյն պարտուց վճարման եւ կերպորն ազատ պիտի ըլլայ . . . Եւ կը տեսնեմք ուրեմն որ Վարչութիւնն այս կարեւոր կէտին վրայէն շատ անորոշ եւ միջին կերպով անցած է, եւ որոշանքէս չ'յայտնել թէ՛ կերպորն եւս ի՞նչ չ'պիտի պիտի մասնակցի սոյն հանգանակութեան գործին :

Առտի ընդունելով հանդերձ Վարչութեան առաջարկի սկզբունքն, գործնականի մասին չեմ կարող համաձայնել իրեն, եւ գէթ խղճիս առջեւ ազատ մնալու համար կը փութամ հետեւեալ բարեփոխեալ առաջարկն ներկայել Ձեզ, մնացեալն թողով ժողովոյդ ի մաստուրեան եւ խոհեմութեան :

Վիառաշարկեմ Ս. Երուսաղիմայ պարտքը 45,000 իրայի հաշուով «ուշա» երեք մասի բաժնել . մի մասը կ. Պոլսոյ, իւր մասը արտասահման երկիրներու մէջ բնակեալ Հայերու, իսկ Գ.Ս մասն՝ իրր 10-15000 իրայ Հայաստանի ոչ թէ գիւղերու, այլ Գ.Ս քաղաքներու մէջ բնակող Հայերու զինուորական տուրքի վրայ ընդունելի և շարունակել մինչև ց'ըրումն իւր ինկած բաժնին :

Աղգ. Երեսփոխան
Աւետիս Թեկեբեան

1 Փետր. 1885

ԳՈՒՐԳԵՆ Յ. ԷԾ.— Աւելորդ է յայտարարել թէ՛ խնդիրն ո՞ր աստիճան կարեւորութիւն ունի այսօր իսկ իւր վերջնական լուծումը գտնելու համար :

Արեւմն առանց երկարօրէն քննելու Վարչութեան ծրագիրն, լո՞կ մի քանի զիտողութեամբ պիտի բաւականանամ :

Տեղեկագիրն կըսէ թէ՛ Երուսաղիմայ պարտքն երեք տարուան մէջ, հանդերձ տուրքը 45,000 ոսկւոյ պիտի բարձրանայ . . . ուրեմն եւս եւս իրրեւ Ազգային երեսփոխան, առ հարկի պարտական կը համարիմ դանձա՞գաւառացեղ թիկանց վրայ այս տեսակ լուծմը գնելու համար ընդունել Վարչութեան բերած առաջարկն : Եւ ըմբռնելով այն մեծ նըշանակութիւնն որ ունի Երուսաղիմ յազմ մեր, եւ միանգամայն համոզուած լինելով որ նորս աստանու մն կրնայ կարի աղիտաբեր լինել համայն Ազգին, պատրաստ եմ առաջին քուէն եւս տալ :

Իսկ զայով բաժանման գործողութեանց, Վարչութիւնն այս կէտն՝ իրր երկրորդական պարտադրյալ մը կը նկատէ, այլ՝ եւս կը փախաքիմ որ Ազգային ժողովն ինքն իւր մէջ որոշէ թէ ի՞նչ համեմատութեամբ Գաւառացիք եւ Պոլսեցիք պիտի մասնակցին սոյն պարտուց, թէ՛ եւ արդարութիւնն կը պահանջէ որ միայն մենք Պոլսեցիքս վճարեմք զայս պարտքն, եւ թշուառ գաւառացեղ ընկնեալ թիկանց վրայ նոր ինս մ'ալ չ'աւելնայ, բայց ըստ որում անհընար է այս, գէթ պարտիմք սկզբամբ ընդունել թէ՛ Պոլսեցեոց բաժինն եւս նման Գաւառացեոց՝ հարկ է որ լինի պարտաւորիչ :

Արեւմն եղբակացնելով կառաջարկեմ : Ա. Ազգ. ժողովն սկզբաւոր որոշ թէ սոյն պարտուց ո՞րչափն Պոլսեցիք եւ որչափն Գաւառացիք պարտին վճարել :

Բ. Ինչպէս Գաւառացեոցն նոյնպէս եւ Պոլսեցեոցն բաժինն պարտաւորիչ լինի :

ԹԻՒՂՊԵՏՏՅԵԱՆ 2, ԷԾ.— Երուսաղիմայ խնդիրն այն տեսակ ծանր խնդիրներէն է, որոյ վրայ եթէ Ձ. Ժամ ալ խօսիմք, դարձեալ չ'բաւեր : Բայց ըստ որում ասոնք խնդրոյն պատմական մասը կը կազմեն այսօր՝ յորում այս խնդրոյն եղած կատարուած վիճակին առջեւ կը գտնուիմք, Հետեւեալքս զանց կընեմ առ այս վերադառնալ :

Երուսաղիմայ խնդիրն այսօր Ազգ. Ժողովոյս կը ներկայանայ այն տեսակ վիճակի մէջ որ արդէն կատարուած գործողութիւն մը կը համարուի : Ո՞վ ըրաւ զայս գործողութիւնս. — Վարչութիւնն, — ի՞նչ իրաւամբ. — զի Սահմանադրութիւն կարտօնէ զնա ի հարկին տընօրինել իւր պատասխանատուութեան ներքեւ :

Թէեւ իմ կարծեօք, ներկայացել սոյն եղանակն իբր գործնական եղանակ մը չեմ նկատեր, բայց ըստ որում Վարչութիւնն ց'արդ իւր պատասխանատուութեան ներքեւ գործեց, մանաւանդ թէ խնդիրն այժմ այն վիճակին հասած է որ այլ եւս Ազգային Ժողովն չունի ձեռնհասութեան տարբեր անօրինութիւն մ'ընելու : Կ'առջարկեմ դարձեալ խնդիրն յանձնել Վարչութեան որ իւր պատասխանատուութեան ներքեւ գործադրէ զայն պատշաճ դատած եղանակս :

Զայս ասելով Թիւրքէնտճեան Ն. Էֆէնտի իւր հետեւեալ առաջարկն ի գիր կ'առնու եւ կը յանձնէ Վիւանին :

Ոչնչպէս որ Ազգ. Կեդր. Վարչութիւնը իւր իսկ պատասխանատուութեանը տակ նախաձեռնութիւն ունեցած է Բ. Իշխանութեան հետ համաձայնելու պարտուց վճարման հանգանակութեանը եղանակին վրայ և Կայսերական հրամանագիրն իսկ ստանալու, նոյնպէս և Ազգ. Ժողովը Կեդր. Վարչութեան կը թողու իւր պատասխանատուութեան ներքեւ ի գործ դնել իւր արժան դատած սոյն անօրէնութիւնը :

Ազգ. Երեսփոխան
Ն. Թիւրքէնտճեան

1 Փետր. 1885

ՂԱՋԱՐՈՍԵԱՆ Գ. ԷՃ. — Ես կարծեմ թէ ասկից աւելի՛ խնդրոյն մէջ մտնելն լաւ չէ :

Եթէ ունիմք մեր Վարչութեան վրայ վտահաւթիւն, թողուք որ գործէ Նա :

Կը տեսնեմ թէ Պօլսեցոց մասնակցութեան մասին ղիտողութիւնը եւ առաջարկութիւնը կ'ըլլան, բայց այժմն աւելորդ է մեզ առ այս՝ խնդիր յարուստանել, վասն զի անուշտ այդ կարեւոր մանրամասնութեանց մասին Վարչութիւնն հարկ եղածն պիտի հաղորդէ մեզ :

Պէտք է զիտնալ թէ զինւորական տրոց հաւաքման ամիսն՝ Մարտ ամիսն է, եւ այսօր ալ Փետրվարի 1 ը, հետեւաբար մէկ ամիս ժամանակամիջոց կայ, եւ եթէ առանց վերջնայն որումն է յանգելու թողուք երթամք այսօր, պիտի պարտաւորիմք մէկ տարի եւս սպասել :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՃ. — Ժողովդ լսեց Ատենայետաց Դիւանի տեղեկագիրն, ինչոյնս նաեւ Թնկրեան եւ Թիւրքէնտճեան Էֆէնտից կողմանէ ներկայացեալ բարեփոխեալ առաջարկներն և երեսփոխանաց ոմանց ղիտողութիւնըն :

Ուստի յառաջ քան զըրեւարկութիւն, կը հրաւիրեմ զՎարչութիւն, որ եթէ հարկ կը տեսնէ, հաճի պատասխանել եղած սոյն ղիտողութեանց :

ԻՋՄԻՐԻՆԵԱՆ Տ. ՄԱՏԹԻՍ ԵՊՍ. — (Տէղեկաբեր Վարդուբեան — բեմն Ելնելով) . Երուսաղիմայ սարտուց խնդիրն Պատի. Ժողովոց վտահաւթեամբ ընտրուած Վարչութեան յանձնուած էր ի կարգադրութիւն : Իրաւ է թէ՛ նորա մէկ ձևդն, այն է Կրօնական Ժողովն երբ իւր սլաշտոնին զուլը անցաւ, ի ընդիրն արդէն իսկ Կայսերական սեղանին վրայ ելած էր :

Այժմ՝ կուզամ Վարչութեան առաջարկի ողջոյն վրայ ինչ ինչ բացատրութիւններ տալ Պատ. Ժողովոցը :

Ինչպէս յայտնի է Ձեզ, Վարչութիւնն ի սկզբան երկու միջոց խորհած էր Երուսաղի-

մայ պարտուց վճարման մասին . այն է վիճա-
կահանութիւն և նախրակայ ձեռամբ կամաւոր
հանգանակութիւն , բայց այս երկու միջոցնե-
րըն ևս չընդունուեցան Կոյսերական Կառա-
վարութեան կողմանէ որ կուղեր զիտնալ հա-
ւարքէի գումարին ճիշդ քանակութիւնն :

Ուրեմն իրաց այս վիճակին մէջ , Ձեր
Վարչութիւնն յետ խորհրդածութեանց՝ ուղեց
այնտիտի միջոց մը գտնել որ ըլլայ զիւրատար
և միտնգամայն զիրադանձելի , հետևաբար
զինուորական տրոց վրայ առժամայց յաւելման
մը առաջարկն կը ներկայէ Պատ. Ժողովոյդ :
Եւ հարկ է գիտնալ թէ՛ զինուորական տուրքն
ի դուստս մեր աղքայնոց ձեռամբ կը գանձու-
ին և այն՝ արդարութեամբ որպէս և բացա-
ղքեանն է ի տեղեկագրի :

Գալով Պատ. Երեսփոխանաց ոմանց զի-
տորութեանց թէ՛ Վարչութիւնն պարտաւոր
էր նշանակել կեղերմին գաւառաց բաժիննե-
րու չարի , կը պատասխանեմ թէ՛ Վարչու-
թիւնն չէր կարող այդ մասին ինքնին անօրի-
նութիւն մ'ընել , բայց ինքն զիտէ թէ՛ Ե-
րուսաղիմաց վանքն ամբողջ սողզինն է և հե-
տևաբար այնչափ զոչորութեամբք ձեռք բեր-
ուած նախրական իրաւանց պահպանութեան
հոգն ամբողջ աղզին կը վերաբերի , ուստի
իւրաբանչիւր շայ , ուր որ ալ գանուի պար-
տաւոր է մասնակցիլ այն նախրական հանգա-
նակութեան :

Իսկ Գալով Գուրգէն էֆէնտիի այն զի-
տորութեան թէ՛ Պոսեպոցոց բաժինն ևս սկստք
է պարտաւորիչ լինի , հարկ է գիտնալ թէ
նոյն իսկ Բ. Գրան պահանջուանն է սոյդ որ
կուէ որտեւ կեղերմին ինկած գումարին քա-
նակութիւնը , բայց Ձեր Վարչութիւնն ց'արդ
այդ մանրամասնութեանց մէջ չէ մտած և երբ
մի անգամ սկզբունքն քուէարկուի , յայնժամ
միայն պիտի կարենայ դադրիլ սոյդ խնդրով և
շատ հաւանական է որ գաւառացոց բաժինն
չհաւասարի նոյն իսկ թիւրեան էֆէնտիի կող-
մանէ առաջարկեալ գումարին :

Աւելորդ չեմ համարիր մի անգամ ևս

յայտնել թէ այս յաւելումը ժամանակաւոր
է , և երբ որոշեալ գումարի գանձումը ամ-
բողջանայ , յայնժամ Վարչութիւնը պիտի
ձանուցանէ զոյս Բ. Գրան որպէս և բացա-
ղքեալ է ի տեղեկագրի :

Ահա Տեալք , այս եղանականն է որ Ե-
րուսաղիմաց վանքն պիտի կրնայ իւր պարտքն
վճարել և այս՝ այնքան ծանր բեռ մը չպիտի
լինի չայ ժողովրդեան վրայ որպէս կը կարծուի :

(ՅԱՄԵՆՈՍԱՍ զՈՒՈՆԱԿԼՈՒՔԵԱՆ ցոյցեր)

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Կառաւարկեմ
իջրկրեան Սրբազանի բացատրութեանց վրայ ,
խնդիրն քուէի դնել :

ՁԱՏՆԵՐ. — Այո՛ , քուէ՛ , քուէ՛ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կը տեսնէք թէ՛ Վար-
չութեան տուած բացատրութեանց վրայ երես-
փոխանք քուէ կը պահանջեն :

Ուրեմն նախ և առաջ վիճարանութեան
փակումը պիտի դնեմ քուէի :

Ձոյս յայտարարելէ յետոյ , Ատենպետ
էֆէնտի քուէի կը դնէ վիճարանութեան փա-
կումը որ ԿԼՆԻՈՒՆՈՒԻ Ա ի զէմ միաձայնու-
թեամբ :

Սոյն քուէարկութեան միջ ձեռնպահ կը
մնայ Ստեփան էֆէնտի Փափազեան :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Վիճարանութիւնն
փոխուած է : Այժմ՝ ներկայացեալ առաջարկ-
ներն կարգաւ Ձեր քուէին պիտի ենթարկեմ-
որք երէք են : Առաջին՝ Ատենպետաց Գիւա-
նի տեղեկագրի երրակայութիւնն , երկրորդ
թիւրեան և երրորդ թիւրպէնտեանն էֆէն-
տիից կողմանէ ներկայացեալ բարեփոխեալ
առաջարկը : Եւ ինչոյս որ գիտէք ըստ օրինի
նախ բարեփոխութիւնք ժողովոյց քուէին պի-
տի ենթարկին :

Ատենապետ էֆէնտի սոյն երեք առաջարկներն վերստին ընթեռնելէ յետոյ նախ ժողովոյն բուէին կենթարկէ Թնկրեան Ա. էֆ.ի առաջարկն որ կը մերժէ ժողովն 3 ի դէմ 19 քուէով, և ապա Թիւրքէնտեան էֆէնտի առաջարկն որ նոյնպէս կը մերժէ ժողովն 3 ի դէմ 16 քուէով :

ԱՅՏԵԱՊԵՏ ԷՖ. — Այժմ Ձեր բուէին պիտի ներկայեմ Ատենապետաց Գիւանի տեղեկագիրն :

ԳՈՒՐԳԷՆ Յ. ԷՖ. — Կառավարիկմ այդ տեղեկագիրի եզրակացութեան կցել և սա բռնորն, որպէս առաջարկելի պահ յառաջ « ինչպէս Գաւառացոց նոյնպէս և Պոլսեցոց բաժինն պարտաւորիչ ընել » :

ԱՅՏԵԱՊԵՏ ԷՖ. — Գուրգէն էֆէնտի կողմնէ առաջարկեալ յաւելուածն կրնամք կցել այն տեղեկագիրին, զի Ատենապետաց Գիւանն ալ կրնդունի զայն :

ԳՈՒՐԳԷՆ Յ. ԷՖ. — Պարզ հարցում մը ևս ունիմ : — Վարչութեան առաջարկի սկզբունքն բուէարկելէ վերջն, արդեօր գործադրութեան մասին ևս վերստին պիտի զիմն ժողովոյն :

ԱՅՏԵԱՊԵՏ ԷՖ. — Եթէ ինքն հարկ տեսնէ, կրնայ զիմել :

ԻԶՄԻՐԵԱՆ Տ. ՄԱՏԵՒՈՍ ԵՊՈ. — Կըրնայ ըլլալ որ վարչութիւնն այն տեսակ կէտի մը պատահի, սրով զիմելու հարկ տեսնէ :

Չանազան նոտարաններէ Երեսօխանք բուէ պահանջելով, այն ինչ Ատենապետ էֆէնտի կը պատրաստուի Ատենապետաց Գիւանի տեղեկագիրն բուէի դնել, յաւելով ի նմա ևս Գուրգէն Յ. էֆէնտի կողմնէ առաջարկեալ բարեփոխումն, Մէրէէմ-Գուլի Յ. էֆէնտի խօսք կառնու օրինական առաջարկութեան մը համար :

ՄԵՐԵՅԻՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Արդեօր կըրնանք այս շխտութիւններէն սղատիլ ընդունելութեամբ հետեւեալ բանաձևին որ յինքն կամրախէ առաջարկեալ բարեփոխութիւններն :

ՅԱՅՆԵՐ. — Լսեմք, լսեմք :

Հետեւաբար Մէրէէմ-Գուլի էֆէնտի կընթեռնու հետեւեալ բանաձևն :

« Ազգային ժողովն Ս. Երուսաղիմայ պարտուց բարձման մասին վարչութեան տեղեկագիրն չըջահայեաց տեսութիւնք գնահատելով կընդունի Ատենապետաց Գիւանի եզրակացութիւնքն և կարտունէ զվարչութիւն ի գործ գնել ըստ այնմ Երուսաղիմայ պարտուց բարձման ազգալարկը » :

ՓԱՓԱՋԵԱՆ Մ. ԷՖ. — Կարծեմ այդ բանաձևին մէջ կարտունէ զվարչութիւն բառերուն տեղ աւելի լաւ կըլլայ ըսել կը յանձնարարի վարչութեան :

ՄԵՐԵՅԻՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Ես չեմ ընդդիմանար, լսայ մենք որչափ թեթեւ բառեր ալ գործածեմք, դարձեալ վարչութիւնն արտունեալ է : Ձխտեմք ինքզինքնիս :

ՅԱՆԱԶԱՆ ՆՍԱՍՐԱՆՆԵՐԻ. — Այդ բանաձևին մէջ ըստ առաջարկութեան Գուրգէն էֆէնտի, պէտք է յաւելու նաև Պոլսեցոց համար պարտաւորիչ բառն :

Մէրէէմ-Գուլի էֆէնտի համակերպելով այն զխտողութեանց, ըստ այնմ կը բարեփոխէ զիւր բանաձևն :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Երբ Պօլսեցւոց վճարումն ևս սրարտաւորիչ լինիր կընդունուի որ Յանձնաժողովոյ զլրակոր առարկութեանց մին էր, կարելի չէ՞ արդեօք Վարչութեան տեղեկագրին մէջ « զինուորական տրոց վրայ յաւելմամբ » խօսքն սրբագրել ստալէս « զինուորական տրոց հետ կամ զինուորական տարրը հիմ՝ բռնելով կատարել հանգանակութիւնը » : Ասկից գատ արդեօք կարելի չէ՞ ևս՝ որ հանգանակութիւնը նախասլէս Պօլսէն և ծովեւզերեաց քաղաքներէն սկսի, և յետաձգուի ներքին գաւառներէն հանգանակութիւնը, մինչև որ հասկցուի այդ վիճակաց հանգանակութեան արդիւնքը :

ԻԶՄԻՐԼԵԱՆ Տ. ՄԱՏԹԷՈՍ ԵՊՍ. — Այն տեսակ պարագայներ են ատոնք, որոց կարգադրութիւնն Վարչութեան և Բ. Դրան հետ տեղի ունենալիք բանակցութիւններէն կախու մըն ունին, և այդ մասին Վարչութիւնն այժմէն չէ՞ կարող ինքնին տնօրինութիւն մ'ընել :

ՁԱՅՆԵՐ. — Քուէ՛, բուէ՛ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այժմ կը փութամ Ժողովոյդ ներկայել Մէրէէմ-Գուլի Էֆէնտիի կողմանէ ներկայացեալ և բարեփոխեալ բանաձևն :

« Ազգ. Ժողովն Ս. Երուսաղիմայ պարտուց բարձման մասին Վարչութեան տեսնելագրոյն շրջահայեաց տեսութիւնքը

գնահատելով կընդունին Ատենապետաց Դիւանի եղբակացութիւնքն, և կը յանձնարարէ Վարչութեան ի գործ դնել ըստ այնմ Երուսաղիմայ սրարտուց բարձման առաջարկն, պարտաւորիչ ընելով նաև Պօլսեցւոց բաժինն :

(Յե՞ր ընթերցման)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — (Շարունակելով) Ատոնք որ այն բանաձևին ընդունելութեան համակարծիք են, թող հաճին յոտնկոյս տալ իւրեանց քուէն :

Հետևաբար յոտնկոյս բուէարկութիւն կատարուելով, Ժողովս 4 ի դէմ 30 բուէով ԿԸՆ ԴՈՒՆԻ Մէրէէմ-Գուլի Էֆէնտիի կողմանէ ներկայացեալ բանաձևն ի մասին պալատուց բարձման Ս. Երուսաղիմայ :

Սոյն քուէարկութեան մէջ հակառակ բուէ կուտան հետեւեալ Երեսփոխանք, խնդրելով որ անուանին արձանագրուի :

- Ռուբէն Էֆէնտի Պուլիուրեան
- Ստեփան » Փափազեան
- Նիկողոս » Թիւլպէնտձեան
- Յովհաննէս » Քէրէտոձեան

Ատենան կը վերնայ ի ժամ 10, յաջորդ նիստն 15 օրէն դուարբուս սրջմամբ :

Ատենաղայիր Ատենապետ
 Ե. ՊՕՇԵՆԱԿԵԱՆ Տ. ԵՈՒՍՈՒՅԵԱՆ

Ն Ի Ս Տ Ժ Զ .

1 Փետրվար 1885

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒՍԱՆՔ

ԿԵՐԻՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՍԱՆՔ
ՆՆԵՆՅԱՍԱՆՔ

Ա. Վ. իմակ

- 1 Միմէօն Եպօ. Սէֆէրեան
- 2 Կարապետ Վ. Բազրատունի
- 3 Վահան Վրդ. Տ. Մինասեան
- 4 Կարապետ Քահ. Սէֆեան

Բ. Վ. իմակ

- 5 Խորէն Արքեպ. Նար-Պէյ
- 6 Մատթէոս Եպօ. Իզմիրլեան
- 7 Յովհաննէս Քահ. Մկրեան
- 8 Գրիգոր » Աճէմեան Բ

Գ. Վ. իմակ

- 9 Յակոբ Վ. Ա. Փախազեան
- 10 Խորէն Քահ. Փէնչիվանեան Բ
- 11 Ոսկի Քահ. Օնանեան Բ 2
- 12

Դ. Վ. իմակ

- 13 Եղիշէ » Ա. յվազեան
- 14 Յովհաննէս Վ. Արշարունի
- 15 Սահակ Քահ. Տ. Սարգսեան
- 16

Ե. Վ. իմակ

- 17 Յովսէփ Վարդ. Ա. յվազեան
- 18 Կարեղին » Թաթարեան Բ
- 19 Սուբիաս Քահ. Ստեփանեան
- 20 Գարրիէլ » Խանճեան Բ

- Բ Բազակայսթիւն առաջին :
- 2 » Կրկրորդ :
- Պ » բանաւոր պատճառաւ :

ՄԵՐՈՒՆՆԵՐ
Ա. Վ. իմակ

Գուսմ-Գարու, Կեսիկ-Փաշա-
Է. Գուսմ-Գարուի դուրս

- 21 Գրիգոր Պէրպէրեան Բ
- 22 Կարապետ Ազարդմանեան Բ
- 23 Բարթող Քիւրքճիպաշեան Բ
- 24 Յ. Մէրեթմ-Գուլի
- 25 Տիգրան Նիւնքեարպէյէնտ Բ
- 26 Աւետիս Սուրէնեան Բ
- 27 Տօթթ. Ա. յվազեան Բ
- 28 Գէորդ Ա. յվազեան Բ Պ
- 29 Յակոբ Եմէնիճեան Բ
- 30 Յակոբ Գուրգէն
- 31 Խաչիկ Կամարական Բ Պ
- 32 Միհրան Ինճէեան
- 33 Մարտիրոս Էքսէրճեան Բ
- 34 Մանուէլ Պէշիբեան Բ
- 35
- 36
- 37

Բ. Վ. իմակ
Պեղիկբաշ

- 38 Բարսեղ Հալաճեան Բ
- 39 Յովհաննէս Քէրէստէճեան
- 40 Մելքոն Պարոնիկեան Բ
- Ե՛հնի-Գարու.
- 41 Լեւոն Բարամանճեան Բ Պ
- 42 Մարուգէ Յրէնկեան
- 43 Պօղոս Ինքսէրճեան Բ
- 44 Յակոբ Պօշնակեան

Իսկիւտար Ս. Խաչ

- 45 Սիմէօն Ֆէլէկեան
- 46 Գարրիէլ Նորատունկեան Բ

47 Գասպար Գասպարեան Բ

48
Իսկիւտար Ս. Կարապետ

- 49 Պօղոս Թորգոմեան Բ 2
- 50 Տրդատ Փափազեան Բ
- 51 Յակոբ Հանճեան Բ
- 52

Գ. Վ. իմակ
Գասրմ-Բաշա

- 53 Գասպար Չեբազ Բ 2
- Բեքա
- 54 Գրիգոր Ալլիմյէճեան Բ
- 55 Ղազար Հովուեան Բ
- 56 Յարութիւն Պէլկեան
- 57 Նշան Պօյաճեան Բ
- 58 Վիշէն Օրմանեան Բ Պ
- 59 Սինքերիմ Մանուկեան Բ 2
- 60 Համբարձում Մազ պօլլե. Բ
- 61 Մանուկ Աւրանեան Բ
- 62

Միջագիւղ

- 63 Տիգրան Եուսուֆեան
- 64 Մկրտիչ Գաղանճեան Բ
- 65 Մկրտիչ ձանձմեան Բ
- 66 Ստեփան Տամատեան
- 67
Պէյզօզ Է. Ղարախա
- 68 Միքայէլ Մամիկոնեան Բ

Գ. Վ. իմակ

- Գուգիւնճուգ Է. Իճատիէ
- 69 Մկրտիչ Մէղպուրեան Բ
- 70 Սիմոն Մաքսուտեան Բ

Գատրգիւղ	ԳԱՒԱՌԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՄԱՆՔ	Նիկովիդիա
71 Գառնիկ Յովակիմեան Բ		120 Կարապետ Ս. Իւթիւճեան
72 Կարապետ Հազարեան Բ	Ա. Վիճակ	Ակն
Նարբը-Գաբու	2մշկածագ	121 Յակոբ Գորեան Բ
73 Միհրան Տէօբմէճեան	101	Ղարամիսար
Եկնի-Մանալիկ Սամարիոյ	Գաղաստիա	122 Կարապետ Երէցեան
74	102	Արաբկիր
Թօփ-Գափու	Ատանա	123 Կարապետ Խաչիկեան Բ
75	103 Մինաս Զերազ	Բաղէշ
Էյուպ Ս. Եղիա Ե. Ս.	Սդէրդ	124 Արիւար Արիւարեան
Աստուածածին	104 Մաթթէոս Ալէքսանեան Բ	Գ. Վիճակ
76	105	Թերիւտաղ
Գուրու-Զեղմէ	Մայրիկա	125 Տիգրան Գ. Սինանեան
77 Կարապետ Սրբաճեան	106 Գէորգ Վարդանեան Բ	Կեսարիա
Հիսար Ե. Պօլաճի-Գիւղ	Եզմիր	126
78	107	Խարբերդ
Նոր-Գիւղ Ե. Սրեկիա	Եզիպտոս	127
79	108 Աբրահամ Մուրատեան Բ	Պայրբեօբ
Պայատ	Բ. Վիճակ	128 Ստեփան Գօրջեան Բ
80 Մկրտիչ Կիւմուշեան Բ	Պրուսա	Մուշ
81 Ռեթէոս Թարգնոսեան	109 Քրիստոստուր Ղազարոսեան	129 Ստեփան Փափաղկեան
82 Ներսէս Երէցեան Բ	Եւրոպիա	Տիփրիկ
Քարակեօմրիկ	110 Կարապետ Կիւրճեան Բ Պ	130 Նշան Գարադաշ Բ
83 Յովհաննէս Թորոսեան	Ամասիա	Զէյթուն Ե. Մարաշ
84 Կարապետ Փանոսեան Բ	111 Համբարձում Ալաճաճեան	131
Ե. Վիճակ	Բալու.	132
Սամարիա	112 Յովհաննէս Ազնաւորեան Բ	Ե. Վիճակ
85 Յակոբ Արշակ	Եղեսիա	Պաղտատ
86 Սարգիս Աղարէզեան Բ Պ	113 Յակոբ Իւթիւճեան	133 Կարապետ Սէթեան
87 Յովհաննէս Նուրեան Բ	Մանգրլիս	Տիգրանակերտ
88 Ռուբէն Կիւմուշկերտեան Բ Պ	114	134 Միհրան Զօզանեան
89	Համրն	Վան
90	115	135 Մարկոս Աղարէզեանց Բ Պ
91	Երզնկա	Աղքամար
92	116 Ռեթէոս Պէրպէրեան Բ	136
93	Գ. Վիճակ	Հայկայ Ե. Այնթապ
94	Կարին	137
Խաղաղի	117 Սերովբէ Ազնաւորեան Բ	Սեբաստիա
95 Ռուբէն Պուլկուրեան	Քեօքանէա	138 Մկրտիչ Յ. Մէլիբեան
96 Յակոբ Խանտանեան Բ Պ	118 Աւետիս Թրնկրեան	Ռուսանուգ
97 Նիկողոս Թիւլպէնտճեան	Աղբիւնուպօլիս	139
98 Նշան Փափաղեան	119 Յակոբ Պարոնեան Բ Պ	Բաբերդ
99		140
100		

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԽԱՌՆ ԺՈՂՈՎՈՅ

ՄԱՏՈՒՑԵԱԼ

Ա.Ռ. Ա.ԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՆ

Ի ՄԱՍԻՆ

ՊԱՐՏՈՒՑ ԲԱՐՁՄԱՆ Ա. ԵՐՈՒՍԱՂԻՄԱՅ

(30 ԳՈՒՆԻՍ 1884)

Վսեմափայլ Ատենապետ Էֆէնտի Աղզային Երեսփոխանական Ժողովոյ .

Ինչպէս կը յիշէք, Աղզային Վարչութեան Խառն Ժողովն 1884 Յունիս 30 թուականաւ տեղեկագիր մը մատուցած էր Պատկառելի Ժողովոյդ Երուսաղէմի պարտուց բարձման խնդրոյն վրայ: Սոյն խնդրոյն կարգադրութիւնն ստիպողական ըլլալով Աղզային Վարչութեան Խառն Ժողովն հարկ կը համարի դիմել Պատկառելի Ժողովոյդ և խնդրել որ բարեհաճի ստիպողութիւն ընծայել գործին և նկատողութեան առնուլ մատուցել տեղեկագիրն:

Ի դիմաց Խառն Ժող. Աղզ. Կեդրոնական Վարչութեան

Կրօնական Ժողովոյ

Ատենադպիր

Յ. Ատենապետ

Վ. Վրդ. Տեր Մինասեան Ա. Նպիս. Սեֆերեան

Քաղաքական Ժողովոյ

Ատենադպիր

Ատենապետ

Ն. Այվազեան

Ս. Մարտիրոսեան

25 Հոկտ. 1884 Կ. Պոլիս

Վսեմափայլ Ատենապետ Էֆէնտի Աղզ. Երեսփոխանական Ընդհ. Ժողովոյ .

Երուսաղէմի Ս. Աթոռոյն պարտուց բարձման եղանակը քննելու համար Պատկառելի Ժողովոյդ կողմէ կարգեալ Յանձնաժողովն իւր պաշտօնն աւարտած և իւր տեղեկագիրը մատուցած լինելով, Աղզային Ժողովն անոր եղրակացութիւնն ընդունած և հետեւապէս Մայր-Բիւանն յատուկ նամակաւ մը նոյն տեղեկագիրը Աղզային Վարչութեան հաղորդած և յանձնարարած էր անոր եղրակացութեան համաձայն գործադրել ընդհանուր հանգանակութեան եղանակն իւր յարակից պայմաններով, Այս ընդհանուր հանգանակութեան եղանակն էր՝ ըստ տեղեկագրի Յանձնաժողովոյ՝ մարդգլուխ 3 շրջի նպաստ հաւաքել, ինչպէս որ արդէն նոյն իսկ պարտուց բարձման Յանձնաժողովն հետեւած էր սոյն եղանակին, և անոր յարակից գլխաւոր պայմաններն էին՝ ի մէջ այլոց՝ հանգա-

նակութիւնն նուիրակաց ձեռօք կատարել զաւառաց մէջ, կայսերական կառավարութեանն արտօնութիւն և արքունի հրամանագրերը ստանալ նուիրակաց համար: Ս. Երուսաղէմի վանուց ապագային վրայ Ազգն ապահովելու համար 1880 թուականին հաստատեալ կանոնագրին տրամադրած միջոցներուն վրայ նորեր ևս յաւելու և ներկայել Ազգային Ժողովոյ վաւերացման:

Ազգային Ժողովոյ Յանձնաժողովն այս եղանակը ներկայացնելով հանդերձ՝ ոչնուազ յուսահատական յայտարարութիւն մը կընէր անոր ելից նկատմամբ, և սա տողերով կը կնքէր իւր տեղեկագիրը: «Եթէ տեղեկքի վրայ գտնուող ամեն հայ պարբերական հրատարակութեանց և այլ միջացաւ չիմանայ և չգգայ թէ Ս. Երուսաղէմի մէջ ազգային եկեղեցական սեպհականութիւնը, պատմական, սուրբ և անգին ստացուածք վտանգի մէջ են, և թէ միանգամայն հաւաքական օժանդակութեամբ մը կարելի է այդ անխուսափելի վտանգին առաջն առնուլ և անոնց ապագայն ապահովել, և թէ մէկ խօսքով չընդհանրանայ Ս. Երուսաղէմի արդի տխուր վիճակին՝ ի մտոյ ծանօթ եղող անձանց ահ ու դողն, հանգանակութեան ձեռնարկն պիտի դատապարտուի այն անել վիճակին՝ յորում դժբաղդաբար գտած է Յանձնաժողովն: »

Եւ ստուգիւ Երուսաղէմի Ս. Աթոռն տաքնապալից վիճակի մէջ, և ծանր ճգնաժամէ մը կանցնէր՝ զոր կարելի չէր դիտել անխուով, ստուգիւ Ազգային Ժողովոյ Յանձնաժողովն՝ որ հանգանակութեան ձեռնարկն դիւրելու դիտմամբ

պայմաններով օժտեր էր զայն, իրաւունք ունէր երկնչելու որ կրնար դարձեալ անել վիճակի մը մատնուիլ առաջարկուած եղանակն, որ արգէն վորձուած և անյաջողութեան մատնուած էր, և Ազգային վարչութիւնը կը տեսնէր թէ ուրպիտի դժուարութիւններ կային պէտք եղած թուով ձեռնհաս նուիրակ եկեղեցականներ գտնելու համար, երբ արգէն թափուր վիճակաց համար հովիւներ գտնել դժուարին եղած էր, նոյնպէս անոնց ծախքերը հայթայթելու և այս մանրաքանակ բայց բազմածաւալ նոյստը կանոնաւորութեամբ և արագութեամբ հաւաքելու համար. սակայն քանի որ զայն զինուրական տրոց հետ հաւաքելու առաջարկն՝ որ Ազգային վարչութեան կողմէ յառաջագոյն մատուցեալ էր Բ. Դրան, անպատասխանի կը մնար երկարատեանէ՝ ի վեր, սակայն քանի որ Ազգային Ժողովոյ Յանձնաժողովոյ կողմէ սոյն պարտուց բարձման վերաբերեալ ուրիշ այլ և այլ միջոցներ քննուելով միայն նուիրակաց ձեռօք հանգանակութիւնն կատարելու եղանակը մնացած և Ազգային Ժողովը յանձնարարած էր զայն դորձադրել, այլևս Ազգ. վարչութեան կը մնար յարիւ անոր և հետամուտ լինիլ դորձադրութեանն, որքան ներէին իւր միջոցներն: Սոյն հանգանակութիւնը թէև Պոլսոյ մէջ չէր արդիւրած Տէրութեան կողմէ, սակայն գաւառաց մէջ անարգիւ շարունակելու համար՝ առաջին պայմանն էր կայսերական կառավարութեան արտօնութիւնն ստանալ, ինչպէս Պատկառելի Ժողովոյ Յանձնաժողովն սոյն հարկն զգացած էր, հետևապէս իսառն Ժողովն վերապահելով

ետքի միւս պայմանաց նկատառումն՝ փութաց տարւոյս Մայիս ամսոյ 15ին Բ. Գրան թագրիւր մը մատուցանելու և բացատրելով Երուսաղէմի Ս. Աթոռոյն տաղնապալից վիճակը՝ արտօնութիւն խնդրել հանգանակութեան համար և յատուկ հրամանագիր նուիրակաց համար, որ պաշտօն պիտի ստանձնէին դաւառներն չըջադայելու և նպատակ հաւաքելու և Ազգային վարչութիւնն երբ կը ջանար խնդրուած հրամաններն ստանալու, և ահաւասիկ նախ՝ Բարձր. Մեծ Եպարքոսին կողմէ առ Ս. Պատրիարքն ուղղեալ հրամանագիր մը և յետոյ՝ Արքարութեան գործոց Վսեմ. Նախարարին մէկ պաշտօնագիրը ծանուցին թէ՛՝ Նախարարաց փողովը սոյն նպատակը զինուորական տրոց հետ հաւաքելու առաջարկն յառաջագոյն սկզբամբ ընդունելի գտած և վեհ. Սուլթանին հաւանութեանը ենթարկած լինելով՝ Նորին Վեհափառութիւնն իւր Բարձր հրամանաւը հաստատած էր զայն, և ըստ այնմ պարտու պաշաճը յանձնարարած էր Ելեմիոց նախարարութեան, Բայց հարկ է ըսել թէ կայսերական կառավարութիւնն փոփոխութեամբ մ'ընդունած էր այս մասին յառաջագոյն մատուցեալ առաջարկն և Ազգային վարչութեան խնդիրն էր մշմիայն արտօնութիւն ստանալ զինուորական տրոց հետ երև. ք տարի չարձնակ նպատակ մը հաւաքելու Երուսաղէմի պարտուց համար, որու գումարը կը կազմէր 36000 Օսմանեան լիւր, այլ ըստ որում հաշիւ կըլլար թէ մինչև երև. ք տարի սոյն պարտքը տօկոսիւք չուրջ 45.000 սսկւոյ պիտի բարձրանայ, առաջարկուած էր միանգամայն ամեն տարի Արքունի գանձէն 15000 սկան սսկւոյ կան-

խալճար մ'ընել, 'ի հաշիւ հաւաքելի նպատակց, իսկ կայսերական կառավարութիւնն՝ ինչպէս բարձրագոյն հրամանագիրք կը յայտնէին՝ առաջարկութեան սկզբունքն ընդունելով՝ կորոյչը սը զինուորական տրոց վրայ բարդելի նպատակ երբ գանձուի բուն իսկ մայր գումարին հետ, զոչայցեալ արդիւնքէն սոյն նոր և առժամանակեայ յայտնուածին պատկանեալ բաժինն Արքունի գանձէն վճարուի Պատրիարքարանի և այս կերպով 'ի բաց կը թողուր կանխավճարն:

Ազգային վարչութեան Խառն Ժողովն սոյն բարձրագոյն հրամանին վրայ նկատողութեան անընդ լինդիրն իւր զանազան կէտերէն՝ քննեց և ուսումնասիրեց զայն, ինչպէս նաև այն ամեն առարկութիւններն, որ կը յարուցուէին այս եղանակին դէմ և ուս եղրակացութեան հասար թէ՛ յառաջագոյն Ազգային վարչութեան կողմէ առաջարկուած և կայսերական կառավարութեան հաստատուած եղանակն ոչ միայն ամենէն անվրիպելի միջոցն էր հանգանակութիւնն յստորութեամբ կատարելու համար, այլ և զերծ էր ամեն անպատեհութիւններէ, որ 'ի սկզբանէ 'ի վեր այս եղանակին կը վերագրուէին:

Չինուորական տրոց բաշխման և հաւաքման գործողութեանց վրայ կանխակալ կարծիքներ մտա գտած են մտքբու մէջ, և անհանգստութիւն զգացողներ կան թէ՛՝ այս նպատակն երբ զինուորական տրոց հետ հաւաքուի, չպիտի լինայուի անկարող ազգայնոց, թէ անոնց դէմ բուռն միջոցներ 'ի գործ պիտի դրուին, թէ կրօնափոխութեանց տեղի պիտի տրուի, և թէ վերջապէս այս նպատ-

տը միանգամ զինուորական տրոց հետ ձուլուելէ յետոյ՝ պիտի մշտնջենաւորի, և նոր արէտից շարժառիթ մը պիտի դառնայ գաւառացի ազգայնոց համար: Թէ այս երկիւղներն ո՞րքան անհիմն են ցոյց տալու և թիւրիմացութիւններն միանգամ ընդ միշտ բառնալու համար հարկ է այս տրոց բաշխման և հաւաքման եղանակը բացատրել, բացատրութիւն մը՝ որ բաւական պիտի լինի ամենէն կասկածոտ մտքերն անդորրելու:

Զինուորական տուրք անունը թէեւ խիստ հնչում մ'ունի, սակայն Արքունի տուրքերու այլ և այլ տեսակաց մէջ այն միակ տուրքն է որ՝ ամենէն աւելի մեղմ պայմաններով կը հաւաքուի, անկարողին կը խնայէ և իւր պայաններով զիւրութիւններ կընծայէ հարկատուներու վստս զի Կայսերական Կառավարութիւնն ամեն ուրեք ըստ մարդավտուոյ տրուելիք գումարին ընդհանուր քանակութիւնըն յատուկ կանոնի մը համաձայն միանգամ որոշելէ յետոյ, տրոց բաշխումն և հաւաքումը կը թողու Ազգին, այսինքն իւրաքանչիւր վիճակի մէջ տեղոյն Դաւառական Վարչութեանց, և անոնց մէ կը պահանջէ դրամն, Տէրութիւնն ըստ օրինի արական սեռէ առհասարակ ամեն անձ՝ նորածինէն սկսելով զառամ ծերունին, աղքատն և հաշմանդամն միանգամայն ՚ի համար կառնու, և իւրաքանչիւր 180 անձէ մէկ զինուոր առնելու գրութեամբ՝ զոր կը գործադրէ Իսլամ ժողովրդեան համար, այդ մէկ զինուորին փոխարէն 5000 զը կը պահանջէ իւր ոչ-մահմետական հպատակներէն, և այս հաշուով 27 զը 30 փոյ. բաժին կիյնայ մարդ գլուխ: Այլ սակայն ըստ

կանոնի անոնք որ հնդետասանամեայ հասակէն կը գտնուին ՚ի խնարհ և եօթանասունը հինգ տարեկանէն վեր, միանգամայն հաշմանդամներն, աղքատներն և եկեղեցականներն զերծ են այս տրոց մասնակցութեան պարտաւորութենէն, ուստի անոնց վճարելիք բաժինն միւսներուն բաժնին վրայ կը յաւելնայ իւրաքանչիւրին կարողութեան չափով: Այս տրոց բաշխումն և հաւաքումն գաւառական մեծ կեդրոններու մէջ Առաջնորդարանք և թեմօրէից մէջ Թաղական Խորհուրդք կը կատարեն, ըստ օրինի պարտաւոր լինելով սակայն բաշխման ցանկերն դնել ՚ի տես Եկեղեցեաց բակերու մէջ, և կը յանձնեն հաւաքածոյ գումարն տեղական Իշխանութեանց սնտուկին: Իսկ Կառավարութիւնը չ'միջամտեր ինչպէս բաշխման՝ նոյնպէս և հաւաքման գործողութեանց, մինչև որ Ազգը չ'տրոնդրէ անոր միջամտութիւնը, և հարկ չկայ ըսելու թէ ամեն ուրեք Ազգային Իշխանութիւնք որքան զգոյշ են այս մասին, զի գիտեն թէ մարդ մը իւր տրոց բաժինը չ'վճարելու համար նիւթական անկարողութեան մասնուած ըլլալու է, թէ անկարողն տրդահատանաց արժանի է միշտ, և թէ օգուտ չ'ունի բռնադատումն անոր դէմ: Տէրութիւնը կանոն դրած է նաև որ երբ մէկն ուրիշ կրօնի յարի, իւր նախորդ դաւանութեան մէջ զինուորական տրոց բաշխումէն իւր բաժնին յատկացեալ գումարը ջնջուի իւր բուն Ազգին տումարէն, և վերագրուի այն հասարակութեան, որու կը յարի կրօնափոխն, և այս կանոնն յատուկ հրամանագրերով ծանուցուած է ժամանակին համայն կուսակալութեանց: Հետեւ

ւապէս կրօնափոխութիւնը միայնուտի միջոց մը չէ զինուորական տուրքէ ճողոպրեմը համար :

Արդ՝ ինչպէս որ այս բացատրութիւններէն բացորոշ կերպով կը յայտնուուի, Երուսաղէմի համար սահմանաւ նպաստն զինուորական տրոց հետ հաւաքել՝ չ'նշանակէր բնաւ բռնութիւն դրձագրել և անկարողներու անիրաւել, չ'ի կրնար տեղի տալ կրօնափոխութեանց, և չ'կրնար մշանջենաւորել այդ յաւելուածն, զի զինուորական տրոց ընդհանուր քանակութիւնն օրինօք որոշեալ է ո՛չ միայն Հայոց, այլ և Տէրութեան՝ բոլոր ո՛չ մահմետական հպատակաց համար, թողունք որ նոյն իսկ բարձրագոյն հրամանագրերուն մէջ յիշատակուած է այս յաւելուածին առժամանակեայ ըլլալն. այլ պարզապէս ազգային հանդանակութեան մէկ արդար, կանոնաւոր և զիւրատար եղանակն է՝ արդար է, վասնզի այս դրութեան մէջ հաւաքելի նպատը զինուորական տրոց եղանակին հետեւողութեամբ կարողներէն միայն պիտի առնուի. կանոնաւոր է, վասն զի հանդանակութիւնն արդէն պատրաստուած տոււմարներու համաձայն և որոշ անձերութեանց մը վրայ պիտի կատարուի, կազմաւորեալ ձեւի մը ներքև և զինուորական տրոց հաւաքման համար արդէն կարգեալ և վճարեալ ազգային պաշտօնէից ձեռօք, և արդիւնքը անխորի և ապահով կերպով պիտի անդրադառնայ Ազգին, և վերջապէս դիւրատար է, վասպն զի նպաստն քանակութեամբ թեթեւ ըլլալէ զատ՝ նաև չ'պիտի պահանջուի ՚ի մի նուագ, այլ երեք տարուան մէջ երեք բաժնէ վճարելով : Հետևաբար պէտք

է մերկանալ այն նախագաշարումներն որոց զինուորական տրոց անունը ծնունդ տուած է, և համոզուիլ որ եթէ Երուսաղէմի Ազգային սեպհականութիւններն որ դին չ'ունին իրենց կրօնական մեծ նշանակութեամբ և նիւթական բարձրարժէքով, Ազգին պարտքն է հաւաքական ճգամբ մ'աղատել վտանգէ, և եթէ հանդանակութեամբ միայն կարելի պիտի լինի հայթայթել այդ դարմն և այս նպատան պէտք է Ազգին ձեռօք՝ բայց արագ կերպով, կանոնաւորութեամբ և արդարութեամբ հաւաքել, դաւառաց մէջ այս արդիւնքը զինուորական տրոց հաւաքմանն առթիւ կրնայ ձեռք բերուիլ քանի որ այդ տուրքը կը բաշխուի և կը հաւաքուի այն սյուսմանց մէջ, որ բացատրուեցան ՚ի վերև :

Ազգային վարչութիւնը քաջ համոզուած է որ դաւառարնակ ազգայինք՝ որոց կրօնասիրութիւնն և բարեպաշտութիւնն խնդրոյ ներքև չ'կրնար դրուիլ, բնա՛ւ տժգոհելու պատճառ մը չ'պիտի ունենան այս եղանակին դէմ, և անձախը ոք սիրով պիտի մատուցանէ իւր դոյզն նպաստն, որ քանակութեամբ փոքր՝ պիտի մեծնայ ընդհանուր հանդանակութեան արդիւնքով, և մեծ արդիւնք մը յառաջ բերելու պիտի ծառայէ : Բայց միթէ դաւառները միայն պիտի հատուցանեն Երուսաղէմի պարտքն, և միթէ կեդրոնն օգուտ քաղելով իւր վարչական ջրութիւնէն՝ կը մտաբերէ անոր բովանդակ ծանրութիւնը դաւառարնակ մերազնէից թիկանց վրայ բեռնաւորել : — Ո՛չ երբէք :

Այս հանդանակութիւնն ընդհանուր է, և Պօլիս որ դաւառաց հետ բողոքատմամբ

աւելի գիւրակեցիկ վիճակ մ'ունի, չը կրնար և չուզեր իսկ բացառութիւն կազմել: Ճշմարտութիւնը կը պահանջէ բնէ որ Պօլսոյ ազգայինը վարժ են արդէն հանրական պիտոյից համար իրենց նպաստներն ընձեռեցու, և Ազգն իւր անմիջական կարօտութիւններն հօգալու համար անոնցմէ կտանայ միշտ առաջին օգնութիւններն, ինչպէս որ նոյն իսկ Երուսաղէմի պարտուց բարձման Յանձնաժողովոյ ձեռօք բացուած հանդանակութեան մասնակցած են երկու հարիւր քսան հազար զրուշի չափ դրամ տալով: Բայց ըստ որում Պօլիս զերժ է զինուորական տուրքէ, և միւս արքունի տուրքերու բաշխումն և հաւաքումն Ազգին ձեռօք չ'կատարուիր, ընտանաբար հարկ պիտի ըլլայ Պօլսոյ մէջ Երուսաղէմի պարտուց բարձման 'ի նպաստ ուրոյն հանդանակութիւն մը կատարել: Ըստ առաջնոյն, բայց աւելի աղբուրութեամբ:

Իսկ թէ այս նպատից ընդհանուր դումարն Պօլսոյ և գաւառաց վրայ ինչ համեմատական քանակութեամբ և հաշուով պէտք է բաշխել, Տէրութեան կողմէ երբ և ինչ կերպով տեղի պիտի ունենայ հաւաքածոյ նպաստից վճարումն, այս ամենն և գեռ ուրիշ մանրամասնութիւններն իբրև սկզբան գործադրութեան վերաբերեալ պարագաներ՝ Ազգային Վարչութիւնն պիտի ուսումնասիրէ, և 'ի հարկին Բ. Գրան հետ բանակցութեամբ այս մանրամասնութիւններն ճշգրտէ, սահմանէ յատուկ կարգադրութեամբ մը, որու համաձայն պիտի աշրուին անշուշտ Առաջնօրդաց և որոց որ անկ է կարևոր հրահանգներն: Ազգային Վարչութիւնն անտես չ'պիտի թողու նաև

Երուսաղէմի Վանուց այս վիճակին վերադարձն արգիլելու խնդիրն, և այս մասին պէտք եղած միջոցներն պիտի անօրինէ, բայց առայժմ որ և է գործողութեան ձեռնարկելէ առաջ հարկ կը համարի այն խոստման համաձայն՝ զոր ըրած է յառաջագոյն յատենի Ազգային Ժողովոյ, խնդրը հաղորդել Պատկառելի Ժողովոյդ, և աներկմիտ է որ իւր այս ամեն բացատրութիւններն հեշտիւ պիտի յառաջ բերեն սա համոզումն թէ՛ դաւառաց մէջ ըլլալիք հանդանակութեան համար ընդունուած այս դրութիւնն օգտակար է ըստ ամենայնի և զերժ ո՛ր և է անտեղութենէ:

Ազգային Վարչութեան Խառն Ժողովն իւր սոյն տեղեկագիրը կնքելէ առաջ պարտաւոր կը համարի զինքն զայս ևս յայտարարել թէ՛ Երուսաղէմի Ս. Աթոռն անհնարին տագնապի մատնուած է այս պարտուց երեսէն, որ իւր տոկոս իւր ինքն ինքնին ամեն օր անհերու և բազմապատկուեցու վրայ է, թէ ժամանակի ամենափոքր կորուստ մը կրնայ այլ ևս աղետարեր հետեանքներ ունենալ և անդարմանալի չարիքներ ծնիլ, որ կը վտանգեն Երուսաղէմի նուիրական սըրբատլայրին մէջ Ազգին ունեցած ոչ միայն սեպհականութիւններն, այլ և իրաւունքներն, որոց համար մինչև ցարդ այնքան մեծ զոհողութիւններ եղած են, և Ազգային Վարչութիւնն տարակոյս չունի որ ներկոյ պարագայից թէ՛ ևս Ազգն համօրէն, դաւառացի թէ՛ Պօլսեցի չ'պիտի զլանայ իւր ձեռնտուութիւնն, և նոյն իսկ Ազգային Պատկառելի Ժողովդ հանդիսական որոշումով մը պիտի ընէ այս կոչումն Ազգին և Ազգային Վարչութիւնն

քաղաքներէալ ա՛յն օժանդակութենէն , զոր կայսերական կառավարութիւնն հաճեցաւ ընծայել , և ոգեւորեալ ա՛յն համատուութենէն , զոր կակնկալէ Ազգային ժողովէդ , պիտի փութայ ձեռն ՚ի դարձ առնել և բառնալ այս սպառնալից չարքն :

Ընդ տեղեկագրոյս կը մատուցուի նաև Պատկառելի ժողովոյդ թարգմանութիւնն ա՛յն կարեոր թղթակցութեանց , որ սոյն խնդրոյն նկատմամբ փոխանակ-

ուած են Ազգ. Պատրիարքարանի և Բ. Դրան մէջ :

Ի դիմաց խառն ժողովոյ Ազգ. կեդրոնական վարչութեան

Կրօնական ժողովոյ
Ատենադպր և Ատենապետ
Վ. Վ. Տէր Մինասեան Խ. Արքե. Նար-Պեյ

Քաղաքական ժողովոյ
Վ. Ատենադպր և Ատենապետ
Պ. Պապօեան Ս. Մարտոսեան

30 Յունիս 1884



[Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page.]

[Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page.]

ՊԱՏՃԷՆՔ

ՓՈՒՍԼԱԿԵԱԼ ԹՂԹԱԿՑՈՒԹԵՄՆՑ

4.

Ամենապապիւ Տ. Ներսէս Սրբազան Պատրիարքն եւ Քաղ. Ժողովն Ազգային Կեդրոնական Վարչութեան առ Բարձր. Մեծ-Եպարքոսն Սահմ. Փաշա :

Երուսաղէմի Ս. Յակոբայ Վանուց հասոյթն ու եկամուտն համեմատութեամբ իւր ծախուց ու պիտոյից բաւականաչափ դումար մը չկազմեր, և հետեւաբար ամեն տարի բաց մը երեւան կուղայ :

Այս բացն կը դոցուէր 'ի սկզբան ուխտաւորաց բերած նպաստի և ողորմութեան լուամաներովն և այն դումարներով, զորս Եկեղեցական նուիրակք ազգայիններէ կը հաւաքէին՝ շրջադայելով ամենուրէք, սակայն ժամանակէ մը 'ի վեր՝ նամանաւանդ վերջի պատերազմի տարիներն թէ՛ ուխտաւորաց թուոյն նուազման, և թէ՛ նուիրակ հանուած չըլլալուն պատճառաւ, ինչպէս նաեւ տուկոսներ վճարուելով առ հարկի փոխ առնուած դրամոց համար, 36,000 ոսկւոյ չափ պարտք մը դիզուած է : Եւ որովհետեւ անհնար եղած է Երուսաղէմի Ս. Աթոռոյն ներկայ հասոյթներէն ու եկամուտներէն թէ՛ պարտուց գլխավճա-

րին և թէ՛ տոկոսեաց համար դումար մը յատկացնել, և միանգամայն անհրաժեշտ եղած ծախքերն յանձանձել, որով պարտուց քանակութիւնն հետզհետէ աճելու և աւելնալու վերայ է, ինչպէս հաստատուած է նոյն վանուց հաշուետուամբներէն և անդ յուղարկուած քրննիչին մանրակրկիտ քննութեան արդիւնքէն, Պատրիարքարանս Ազգին երեւելի անձերէն բաղկացեալ Յանձնաժողով մը կազմած էր, որպէս զի յառաջիկային պարտք չգոյանալու համար խնայողական միջոցներ ձեռք առնուին, և ազգայիններէն նպաստ հանգանակուելով վանուց պարտքը վճարուի :

Պատրիարքարանս ասկէց առաջ Արդարութեան դործոց Նախարարութեան մատուցած 1 Սեպտեմբեր 1882 թուական Խաչէրովն Վանուց այս վիճակը, և անոր բարոյքմանն համար ձեռք առած միջոցները յայտնելով մանրամասնութէն՝ Կայսերական Կառավարութեան արտօնութիւնը և օգնութիւնը խնդրած էր հանգանակութեան մասին : Բայց այս անգամ նոյն Յանձնաժողովոյ անդամք Քաղաքական Ժողովոյ ներկայացած, և յայտնելով որ Երուսաղէմի վանուց սըն-

տուկը առաջիկային պարտուց ներքեւ չմնալու համար, հարկ եղած խնայողական միջոցները սահմանած և դործադրութեան խի գրած են թէեւ, սակայն հանգանակութեան մասին կայսերական կառավարութեան կողմէ սպասուած արտօնութիւնը տակաւին չնորհուած չէ, և յարելով միանգամայն որ՝ եթէ ամեն կողմ հանգանակութեան համար նուիրակներ հանուին, ոչ թէ միայն նպատի դրամոց հաւաքումը երկտր ժամանակ պիտի տուէ, այլ և այս առթիւ նոր 'ի նորոյ ծախքեր տեղի պիտի ունենան, և հետեւաբար պարտուց բարձման նպատակաւ հաւաքուած գումարէն բաւական գումարներ պիտի ծախուին, և միւս կողմէն, ինչպէս փորձը ցոյց տուած է արդէն, ժամանակ անցնելով տոկոսները պիտի աճին, և պարտուց բարձման դործը անկարելութեան պիտի դատարարուի, որով հնարին չ'պիտի լինի հասնիլ բաղձաշեւ նպատակին, յայտարարեցին թէ այս եղանակաւ յոյս չունին իրենք որ այս պարտքը բարձուի, և թէ այս մասին եթէ տարբեր անօրէնութիւն մը ձեռք չ'առնուի, հետեւանք խիստ դառն պիտի լինի, և թէ այլ եւս իրենք չեն կրնար ստանձնել այսպիսի վիճակի մը պատասխանատուութիւնը:

Յայտնի է արդէն թէ Հայոց Ազգն Ս. Երկրին մէջ ունեցած ազօթատեղիներն և կալուածները ց'արդ անկորուստ պահպանած, և Օգոստափառ Սուլթանին այն Ս. Երկրին վրայ ունեցած վեհապետական իրաւունքն, և անոր բարձր հովանաւորութենէն օգուտներ քաղած և բարիքներ վայելած լինելուն պատճառաւ՝ շարժած է իւր վերայ նա

խանձն այն ժողովրդոց, որ Բրիտանեայ օտար Տէրութեանց հետ յարաբերութիւն ունին կամ հպատակութեան և կամ կրօնակցութեան պատճառաւ, հետեւապէս Երուսաղէմի Սթոռոյն նիւթական այս վիճակին առջեւ Հայոց Ազգին իրաւունքները պիտի վտանգին, և ծանր անպատեհութիւնք ծագին, եթէ Ս. Աթոռոյ ներկայ դառն վիճակը բարւոքելու համար անմիջական անօրէնութիւն մը 'ի դործ չ'գորուի Ուստի այսչափ տարիէ 'ի վեր երուսաղէմի մէջ մեզ աւանդուած սեպհականութեան իրաւունքն և մեր Ազգային արժանապատուութիւնը վտանգէ զերծ կացուցանելու և այսպէս պատասխանատու չըմնալու համար մեր Օգոստափառ Վեհապետին առջև, որ բարձրագոյն և արդարակորով պաշտպանն է մեր ազօթատեղեաց և կալուածոց, ժողովս խնդիրը իւր ամեն պարագաներովս ուշադրութեան առարկայ ըրաւ, և որպէս զի սոյն պարտուց բարձման համար Ազգին իւրաքանչիւր անհատէն դրամ հաւաքելու յատկացեալ պաշտօնէից համար մասնաւոր ծախքեր ընելու պէտք չմնայ, և ց'վճարումս սոյն պարտուց տոկոսներու աճման տեղի չը տրուի, ժողովը այս պարտուց վճարման համար՝ դիրտագործագրելի միջոց մը խորհեցաւ, և այն է սոյն նպատակ դըրամը աղգայնոց զինուորական տրոց հետ հաւաքել, և վտանակ մէկ անդամով դանձեղաւ՝ առ 'ի դիւրելութիւն՝ երեք տարուան մէջ դանձել և լրացնել դործը: Եւ զի յիշեալ պարտքը երեք տարուան մէջ իւր տոկոսներով շուրջ 43,000 լիրայի պիտի բարձրանայ, ամեն տարի 13,000ական օսկոյ վճարում մը խընդ-

րել Արքունի դանձէն, 'ի հաշիւ այն նըպաստից, որ պիտի հաւարուի զինուորական տրոց հետ:

Հարկ կը համարիմք գիտել տալ Ձեր Բարձրութեան թէ զինուորական տրոց վճարման անոնք միայն կը մասնակցին, որ օրինական տարիքն ունին և անկար ու աղքատ չեն. թէ Արքունի դանձէն կանխապէս վճարելի յիշեալ 15,000 ոսկին զինուորական տրոց հետ գիւրութեամբ, և առանց ծախուց կարելի պիտի լինի հաւաքել, թէ այս եղանակը ո՛չ Արքունի դանձուն, և ո՛չ ժողովըրդեան վրայ բեռ մը չ'պիտի յաւելու, և թէ սոյն պարտուց կարգադրութեան համար ասկէց զտ ուրիշ յարմար եղանակ մը գտնուած չէ, ուստի կը խնդրեմք որ Կայսերական Կառավարութիւնը շնորհ ընէ այս եղանակաւ Երուսաղէմայ վանքը իւր պարտքէն ազատել, որով Հայոց Աղզին վայելած այնքան շնորհաց վրայ նոր մ'ալ պիտի յաւելու և այս առթիւ Եւս բարեբաղդ և երախտապարտ կացուցանէ Հայոց Աղզն:

ԿՆԻՔՔ

Սրբազան Պատրիարք Հօր եւ Բարձր Մեծ—Եպարդոսն Սախա ֆաշա:

17 Փետրվար 1883

2

Ամեն. Ներսէս Սրբազան Պատրիարքն եւ Իսաան ժողովն Աղզ. Կեղրոնական Վարչութեան առ Բարձր Մեծ—Եպարդոսն Սախա ֆաշա:

Մեր նախորդ մէկ թագրիրովն՝ զոր Ձեր Բարձրութեան մատուցած էինք 1883 Փետրվար 17 թուականաւ ու 18 համարաւ,

յայտնած էինք թէ Երուսաղէմ վանուց հասցիւթ չ'պիտի զօրենս յիշեալ դիզեալ պարտքերն հատուցանելու, թէ այս պատճառաւ հարկ եզած է ազգային հանգանակութեամբ նպաստ հաւաքել և սոյն պարտուց վճարման յատկացնել, ինչպէս եղած է յանցելու մե, հետեւապէս խնդր մատուցած էինք Ձեր Բարձրութեան որ արտօնութիւն շնորհուի սոյն հանգանակութիւնը զինուորական տրոց հետ կատարելու, որ առանց նոր ծախուց պէտք թողելու գիւրին միջոց մը պիտի լինէր հանգանակութեան, Բաց ասկից խնդրած էինք նաև որ Արքունի դանձէն 15,000 լիւրայի կանխավճար մը լինի հաշուակցելու պայմանաւ այն դամարին՝ որ զինուորական տրոց հետ հաւաքուելով՝ պիտի յանձնուէր Արքունի դանձուն:

Աւելորդ է յայտնել որ մեր նախորդ թագրիրովն մանրամասնօրէն յայտնած էինք Երուսաղէմի Աթոռոյն հաստից տեսակներն, պարտուց դոյցաման պատճառներն և այն ամեն խնայողական միջոցներն ու կարգադրութիւններն որ ձեռք առնուած էին արգիլելու համար նոր պարտքերու ծնունդն: Եւ ըստ որում չ'յաջողեցաւ մեզ ց'արդ մեր խնդրոյն ընդունելութիւնը տեսնել, և միւս կողմէ վանուց պարտքը տոկոսեաց պատճառաւ հետզհետէ աճելու վրայ է և Երուսաղէմի Աթոռոյն վարչութիւնը դժուարին կացութեան մը մատնուած, այնպէս որ Երուսաղէմի Պատրիարքն Ամեն. Տ. Եսայի Սրբազան յատկապէս Մայրնաբաղաքս գիւմած է, ուր քանի տարիէ հետէ կապասէ Կայսերական Կառավարութեան շնորհոցն ու արտօնութեանն, և Նորին Սըր-

բաղնութեան բացակայութեան պատճառաւ Երուսղէմի աղղային գործոց մատակարարութիւնը պարզապէս երեսի վրայ մնացած է, և Վանուց Միաբանք պարտապահանջից ձեռքէն նեղութեան մասնուած են, և ըստ որում նպաստի հաւաքման և զանձման գործը դիւրացընող միջոցներուն մին ալ Օսմանեան երկրին հայաբնակ գաւառները եկեղեցական նուիրակներ յուղարկելն է, և Հայոց Ազգը 'ի վաղ ժամանակաց ունի այդ արտօնութիւնն, որ հաստատեալ է կայսերական հրովարտագոր, Խառն ժողովը յետ խորհրդակցութեան՝ պատշաճ համարեց որ ինչպէս 1824 Թուականին, այսինքն ասկից 34 տարի առաջ կայսերական հրովարտակներով նուիրակներ յատկանան և յուղարկուին գաւառներն յանուն Երուսղէմի պարտոց նըպաստ հաւաքելու համար:

Եթէ սոյն նուիրակաց յուղարկումը յետաձգուելով՝ սակաւին քիչ մը ժամանակ ալ անցնի, որբալի վիճակ մը պիտի առնու մատակարարութիւնն ու հրակողութիւնն այն վանօրէից, արցձատեղեաց և կալուածոց՝ որոց 'ի վաղնուց հետէ Հայոց ազգն տէր եղած է Սուրբ Երկրին մէջ, և շնորհիւ Օսմանեան Տէրութեան բարձր պաշտպանութեան՝ կրցեր է ցարդ պահպանել դանձոք անկորուստ, և հետևանքն պիտի լինի աւերումն այն հաստատութեանց, Մակայն տարակոյս չունիմք բնաւ, Բարձր Տէր, որ մեր Օգոստոսիառ Վեհապետը Հաւանիր բնաւ և չտար թող երբէք որ այսպիսի վիճակ մը յարատեւէ, և Պատրիարքարանս ծանր պատասխանատուութիւն մը հրաւիրած կըլլայ իւր վրայ, և թէ չըլիմէ իւր Վեհապետին գթութեանը և այս վիճակին դարմանը Հայցէ, ուստի կը խնդրեմք որ արտօնութիւն արուի նուիրակներն անվճարապէս կտրգելու և զրկելու, և այժմէն կը յայտարարեմք որ այս ալ

նոր առթիւ մը պիտի ըլլայ Հայոց Ազգն շնորհապարտ թողլու:

ԿՆԻՔԲ

Ամեն Սրբազան Պատրիարք Հոր ևւ Կրօն. ևւ Քաղ. Ժողովոյ Ազգ. Կեդրոնական Վարչութեան

13 Մայիս 1884

3.

Բարձր. Մեծ-Նպարդան Սախա Փաշա առ Ամեն. Տ. Ներսէս Սրբազան Պատրիարքն Հայոց

Ձեր Սրբաղնութիւնն իւր մէկ թաղրիբովը, զոր կ'ըրած էր նաեւ Քաղաքական Ժողովը, կը յայտնէր թէ Երուսղէմի Ս. Յակոբայ Վանուց պարտուց բարձման համար Ազգին իւրաքանչիւր անհատէն նպաստի դրամ հաւաքելէ զտուրիչ միջոց չ'կայ, և որպէս զի սոյն նըպաստը հաւաքելու համար պաշտօնեաներ կարգելու և անոնց համար մասնաւոր ծախքեր ընելու հարկ չ'ընայ, և ց'վըճարումն սոյն պարտուց չ'աճին և չ'ըարգուին տոկոսներն, կը խնդրէր որ արտօնութիւն արուի սոյն նպաստն երեք տարուան պայմանաժամու մէջ զինուորական արոց հետ հաւաքելու, և յարելով միանգամայն թէ 36,000 լիւրայ պարտքը մինչև նոյն թուականն իւր տոկոսներովը 45,000 լիւրայի կը բարձրանայ, կը խնդրէր որ Արքունի դանձն տոկոս տարի 13,000 արնոս ոսկույ վճարում մը լինի 'ի հաշիւ հաւաքելի նպաստին:

Նախարարաց Ժողովը Ձեր խնդիրն յառաջագոյն սկզբաբն ընդունելի դատած և տեղեկագիր մը մատուցած էր, որ կը արամագրէ յանձնարարել Գանձուց Վսեմ. Նախարարին, որպէս զի, երբ սոյն նպաստը զինուորական արոց գումարին վրայ բարդուելով զանձուր անոր հետ, այն ատեն զինուորական արոց համեմատութեամբ՝ անոր վրայ բարդուած նոր և առ ժամանակեայ գումար

մարին ինչ բաժին որ մնայ, Արքունի գանձէն վճարուի Պատրիարքարանին :

Օգոստոսի առ Սուլթանը, որու հաւանութեան ենթարկուած էր սոյն որոշումն, իւր Բարձր հրամանովը զայն հաստատած և ըստ այնմ պէտք եղածը յանձնարարած լինելով թէ Գանձուց և թէ Արքարութեան գործոց Վսեմ. Նախարարաց, Չիք Սրբազնութեան կը ծանուցանենք զայս 'ի գիտութիւն :

(Ստորագրութիւն) ՍԱՐՏ

5 Յունիս 1884

Համառօտ թարգմանութիւն չըջարեալ կան հրամանագրոյն Բ. Գրան, ուղղեալ առ Կուսակալութիւնս Խզմիրի, Գոնեսայի, Տրապիզոնի, Երզրումի եւ Քիրսիսթանի, եւ առ Միւթէսարըքիութիւնս Պրուսայի, Խզնիսթի, Պիդալի, Խարբերդի, Ատանայի, Մարաշի, Էնիկըրիի, Գասթամուրի, Սըվաչի, Ամասիոյ եւ Հէքեքարիի :


Հայոց Պատրիարքարանը կը ծանուցանէ թէ Կաթողիկ կղերականք դաւաւաացի հայերն 'ի Կրօնախօսութիւն կը հրապուրեն, խոստանալով որ եթէ յայն Կաթողիկ կրօնին, իրենց զինուորական տուրքը պիտի զեղչէլ տան և թեթեւցեն, թէ յաջողած իսկ են հրամանագրեր ստանալու որ երբ հայ մը Կաթողիկ եկեղեցւոյն դիմէ, անոր անունը միայն ջնջուի Հայոց տումարէն, և յաւելնայ Կաթողիկ հասարակութեան մարդահամարի տումարին վրայ, և թէ այս կերպով մնաս կը հասցնեն Հայոց 'ինչպէս նաեւ Արքունի գանձուն, ուստի կը խնդրէ որ պարտ ու պատշաճ տնօրէնութիւն մը լինի սոյն անպատեհութեանց առաջըն առնելու համար: Թէև ասիկց առաջ Կաթողիկաց կողմէ տեղի դատած ինքզանց վրայ հրամանագրեր տրուած են, սակայն ոչ թէ մտրդ գլուխ յատկացեալ զինուորական տուրք զատելու,

այլ օրինաց տրամադրութեան համեմատ գործադրելու պայմանաւ գրուած են, ուստի Հայոց Պատրիարքարանի սոյն խընդիրը յանձնելինք Ելեւմտից Նախարարութեան, որոյ տեղեկագրութեան վերայ ներկայ չըջարեալանաւս ինչպէս ծանուցինք միւս Կուսակալութեանց, նոյնպէս և Ձեզ կը ծանուցանեմք թէ ըստ որում իւրաքանչիւր քաղաքի և ժողովրդեան համար յատկացած զինուորական տուրքը անձանց նիւթական կարողութեան չափով Ազգապետաց միջոցաւ կը բաշխուի ժողովրդեան վրայ, և այս կերպով անկարողին բաժինը կաւելնայ կարողութեան տէր անձանց վճարելի տուրքին վրայ, և այսպէս օրինաց տրամադրութիւնն 'ի գործ գրուած և արքարութիւնը յարդուած կ'ըլլայ, և ուրով նեղեալ արժան չ'է որ կաթողիկութեան դիմելը հայերը միայն իրենց անձնական տուրքը զատելով բաժնուին երթան, և աղքատաց բաժնին համար իրենց արոց վրայ յաւելցած մասը թողուն Հայոց բաժնին, ուստի հարկ է որ երբ մէկը Կաթողիկ կամ ուրիշ կրօնի յարելու լինի, իւր նախորդ կրօնին մէջ գտնուած միջոցին ամեն տարի ինչ քանակութեամբ որ կը վճարէր զինուորական տուրքը, նոյն գումարն յաւելնայ այն ժողովրդեան տրոց տումարին վրայ, որու յարած է 'ի վերջոյ :

15 Շէվալ 1278

Սոյն իմաստ հրամանագիր գացած է,

	Հեղինակ	
Ուրֆայի Միւթէսարըքիին		1279
Թեքիւրտաղի	»	1280
Իզմիտի	»	1280
Կարնոյ	Կուսակալութեան	1281
Ուրֆայի Միւթէսարըքիին		1281
Տիւրքալէքիի Կուսակալութեան		1284



ԱՅԳԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆ

ԱՆԴԱՄՔ ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

1.	Տ.	Խորէն	Արքեպս.	Նար—Պէյ	Ա. Արեւ-դէր
2.	»	Սիմէոն	Եպս.	Սէֆէրեան	Բ. »
3.	»	Մատթէոս	»	Իզմիրլեան	»
4.	»	Գարեգին	Վրդ.	Թայթարեան	»
5.	»	Վահան	»	Տ. Մինասեան	Ա. Արեւ-դէր
6.	»	Տաճատ	»	Ոսկանեան	Բ. »
7.	»	Յակոբ	»	Ա. Փափաղեան	»
8.	»	Յովհաննէս	»	Արշարունի	»
9.	»	Յովհաննէս	Քհյ.	Մկրեան	»
10.	»	Սահակ	»	Տ. Սարգսեան	»
11.	»	Սուքիաս	»	Ստեփանեան	»
12.	»	Գրիգոր	»	Աճէմեան	»
13.	»	Խորէն	»	Փէշիվանեան	»
14.	»	Կարապետ	»	Սէթեան	»

ԱՆԴԱՄՔ ՔՍՂԱՔՕԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

1.	Աղնաւորեան	Յովհաննէս	Էֆէնտի	
2.	Այվազեան	Տօք. Նշան	»	Բ. Արեւ-դէր
3.	Գըլըճճըեան	Գէորգ	»	»
4.	Թորոսեան	Յովհաննէս	»	Ա. Արեւ-դէր
5.	Խըտըրեան	Գրիգոր	»	»
6.	Խօրասանճեան	Թովմաս	»	»
7.	Հաղարեան	Կարապետ	»	»
8.	Հալաճեան	Բարսեղ	»	Բ. Արեւ-դէր
9.	Մարտոտեան	Սիմոն	Պէյ	Ա. »
10.	Մամիկոնեան	Միքայէլ	Էֆէնտի	»
11.	Պապօեան	Պապի	»	»
12.	Ոթիմարաճեան	Գէորգ	»	»
13.	Փէշաիմալճեան	Տօքթօր Տիգրան	»	»
14.	Բիւրքճիխանլեան	Կարապետ	»	»

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

Օ Ր Ա. Կ Ա Ր Գ.

Ա. — Ատենական զործողութիւնք .

1. — Մահագոյթ Պահէգարուեան Միհրան Էփէնտիի .

2. — Վաւերացումն ԺԲ, ԺԳ. և ԺԴ. նիստերու Ատենազրու-
թեանց .

3. — Պաշտօնական հեռագիր Նորընտիր Ս. Պատրիարքի և
խնդիր հրատարակաց .

4. — Յաւակրատն զիր ի զմաց Նիւ-Եորքի Ազգայնոց .

5. — Երեսփոխանական հրատարակիր Յ. Էփ. Արշակունւոց .

6. — Վիճակաւ դադարումն Երեսփոխանոց .

Բ. — Խնդիր Ս. Երուսաղիմաց սրարտուց բարձման և Տեղեկագիր Ազ-
գային-Վարչութեան (ղանկիակ) .

